ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ 2026 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 1/428 Ա ՈՐՈՇՄԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ[1] ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ

Թողարկողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական ձևը

ՀՀ, 0052, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 9/16
Հեռ. (+37410) 550831
Էլ. փոստ՝ fca@fca.am,
Ինտերնետային կայք՝ www.fca.am

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Տեղաբաշխողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական ձևը

ՀՀ, 0002, ք.Երևան, Բուզանդի 87, 85 տարածք
Հեռ. (+374 10) 59 23 23
Էլ. փոստ՝ info@araratbank.am,
Ինտերնետային կայք՝ www.araratbank.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

Արժեթղթերի դասը՝	Անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս	
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային	
Արժեթղթերի քանակը՝	Համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի	
Արժեկտրոնային եկամտաբերություն՝	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով	
Շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով	
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված	
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	մինչև 3,000,000,000 (երեք միլիարդ)ՀՀ դրամ՝ անկախ արժույթից, որից մի մասը՝ կանոնադրական կապիտալի չափով, առանց ապահովվածության, մնացած մասը՝ ապահովվածությամբ	

[1] Սոցիալական պարտատոմսերի թողարկումն իրականացվում է Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (International capital market association - ICMA) կողմից հրապարակված սոցիալական պարտատոմսերի սկզբունքների (Social bond principles) համաձայն: ՀՀ-ում սոցիալական պարտատոմսերի թողարկման տաքսոնոմիա առկա չէ, դրա ընդունվելու դեպքում հնարավոր են թողարկված պարտատոմսերը սոցիալական որակելու սկզբունքների տարբերություններ ICMA-ի կողմից սահմանված դրույթների հետ:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳԻՐ

«Ֆարմ կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 3

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 6

1.1. Տեղեկատվություն Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ 7
1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 12
1.3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները 16
1.4. Թողարկողի աուդիտն իրականացնող անձ 18
1.5. Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և բաժնետերերը 18
1.6. Թողարկողի կողմից առաջարկվող սոցիալական պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները. 20
1.7. Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը 22
1.8. Այլ էական տեղեկություններ 22
1.9. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները 22

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 24

2.1. Ռիսկային գործոններ 24
2.2. Հիմնական տեղեկատվություն 26
2.3. Տեղեկատվություն առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ 29
2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները 37
2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 42
2.6. Լրացուցիչ տեղեկատվություն 43
2.7. Պարտատոմսերի լրացուցիչ պայմաններ 43

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 50

3.1. Անկախ աուդիտորները 50
3.2. Ռիսկային գործոններ 50
3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին 56
3.4. Բիզնեսի նկարագիրը 58
3.5. Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը 63
3.6. Հիմնական միջոցները 64
3.7. Զարգացման վերջին միտումները 65
3.8. Շահույթի կանխատեսումը 67
3.9. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները 69
3.10. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը 78
3.11. Հսկող անձինք 86
3.12. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին 86
3.13. Լրացուցիչ տեղեկատվություն 87
3.14. Էական պայմանագրերը 88
3.15. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը 89
3.16. Այլ տեղեկատվություն 89

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«Ֆարմ կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Սերյոժա Հայրապետյան	**Դիտորդ խորհրդի նախագահ**		10.11.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արտավազդ Խաչատրյան	**Դիտորդ խորհրդի անդամ**		10.11.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ռաֆիկ Օհանյան	**Դիտորդ խորհրդի անդամ**		10.11.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ռոլանդ Սուսունյան	**Դիտորդ խորհրդի անդամ**		10.11.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արմեն Ստեփանյան	**Դիտորդ խորհրդի անդամ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Էդվարդ Պետրոսյան	**Դիտորդ խորհրդի անդամ**		10.11.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«Ֆարմ կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

Քնարիկ Պետրոսյան	**Դիտորդ խորհրդի անկախ անդամ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հարություն Զաքոյան	**Դիտորդ խորհրդի անկախ անդամ**		10.11.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արմեն Գաբրիելյան	**Գլխավոր, Գործադիր տնօրեն/նախագահ**		10.11.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Մուշեղ Պետրոսյան	**Գլխավոր, Գործադիր տնօրենի տեղակալ/Գործառնական տնօրեն**		10.11.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Անի Սարգսյան	**Գլխավոր, Գործադիր տնօրենի տեղակալ/Ֆինանսական տնօրեն**		10.11.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հրանտ Եղիազարյան	**Գլխավոր, Գործադիր տնօրենի տեղակալ/Վարկային տնօրեն**		10.11.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«Ֆարմ կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ կողմից անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման

Արսեն Լոբյան	**Գլխավոր, Գործադիր տնօրենի տեղակալ/Տարածքային զարգացման գծով տնօրեն**		10.11.2026թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հրաչուհի Հովհաննիսյան	**Գլխավոր հաշվապահ**		10.11.2026թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Մեսրոբ Ավագյան	**Ներքին աուդիտի բաժնի պետ**		10.11.2026թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վախթանգ Աբրահամյան	**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Վարչության նախագահ Գործադիր տնօրեն**		10.11.2026թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունների իսկությունը հաստատում եմ՝

Արմեն Գաբրիելյան	**Գլխավոր Գործադիր տնօրեն/նախագահ**		10.11.2026թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ «ՖԱՐՄ ԿՐԵԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ առևտրային կոոպերատիվ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԹՈՂԱՐԿՈՂ ԿԱՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳՐԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԱԶԴԱԳԻՐ) ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ (INTERNATIONAL CAPITAL MARKET ASSOCIATION - ICMA) ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ (SOCIAL BOND PRINCIPLES) ՀԱՄԱՁԱՅՆ: ՀՀ-ՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՏԱՔՍՈՆՈՄԻԱ ԱՌԿԱ ՉԷ, ԴՐԱ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՆ ՈՐՈՇԱԿԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ICMA -Ի ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով Թողարկողի և/կամ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Տեղաբաշխող) ինտերնետային կայքերում՝ www.fca.am, www.araratbank.am:

2024 - 2025 թվականների դրությամբ ներկայացված բոլոր ֆինանսական տվյալների աղբյուրն են հանդիսանում Ընկերության աուդիտ արված տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

Սույն ազդագրում ներկայացված տեղեկատվությունը, բացառությամբ տարեկան ֆինանսական հաշվետվությունների, անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

Տեղեկատվություն Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ առևտրային կոոպերատիվ,

ռուսերեն՝ «Фарм Кредит Армения» универсальная кредитная организация коммерческий кооператив

անգլերեն՝ «Farm Credit Armenia» universal credit organisation commercial cooperative

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆարմ Կրեդիտ» ՈՒՎԿ ԱԿ,

ռուսերեն՝ «Фарм Кредит» УКО КК,

անգլերեն՝ «Farm Credit» UCO CC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 9/16, գրանցման համարը՝ 43:

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 9/16:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 10) 55 08 31, (+374 10) 55-07-41

էլ. փոստ՝ fca@fca.am,

ինտերնետային կայք՝ www.fca.am:

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/ Ֆինանսական տնօրեն Անի Սարգսյանի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+37410) 550831, էլ. փոստ՝ anis@fca.am:

1.1.1. Կազմակերպության համառոտ նկարագիրը

Կազմակերպությունն իրավաբանական գրանցում է ստացել 2007թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ Կենտրոնական բանկում (լիցենզիա թիվ 20): Կազմակերպությունը հանդիսանում է առաջին կոոպերատիվ վարկային կազմակերպությունը և միակն է իր տեսակի մեջ Հայաստանում:

Կազմակերպության Հիմնադիր ժողովը տեղի ունեցավ 57 ֆերմերների, փոքր ու միջին ձեռնարկատերերի և ԱՄՆ Ֆարմ Կրեդիտ Համակարգի Վիրջինիայի Ասոցիացիայի Խնամառու Հիմնադրամի մասնակցությամբ: Ընտրվեց դիտորդ խորհուրդ՝ բաղկացած 5 անդամներից (մարզերի ներկայացուցիչներից) և արտաքին անդամից: Դիտորդ Խորհրդի նախագահ ընտրվեց Սերյոժա Հայրապետյանը, Գլխավոր գործադիր տնօրեն՝ Արմեն Գաբրիելյանը:

Կազմակերպության առաքելությունն է բարելավել կյանքի որակը Հայաստանի Հանրապետության գյուղերում՝ մատուցելով կոոպերատիվ սկզբունքների վրա հիմնված մատչելի ֆինանսավարկային ծառայություններ:

Կազմակերպության տեսլականն է՝ ՀՀ-ում գյուղատնտեսական վարկային ներդրումներով լինել առաջատարը վարկային կազմակերպությունների մեջ՝ հաճախորդներին մատուցելով նախընտրելի ծառայություններ:

Կազմակերպության ստեղծման նպատակն է վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը, որն իրավունք ունի իրականացնել ունիվերսալ վարկային կազմակերպության գործունեություն՝ ՀՀ ԿԲ-ի կողմից վարկային կազմակերպության լիցենզիա ստանալու օրվանից:

Կազմակերպությունը, վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա՝ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով ունիվերսալ վարկային կազմակերպություններին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները և կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է վարկային կազմակերպության գործունեություն և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը Ազդագիրը ՀՀ ԿԲ ներկայացնելու պահին կազմում է 1,554,730,332.5 ՀՀ դրամ[2], իսկ անդամ փայատերերի թիվը կազմում է 11,827:

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 1,525,623 հազ. դրամ (2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,525,623 հազ. դրամ): 2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունը ունի 11,279 անդամ, 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը ունի 11,279 անդամ (2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10,839 անդամ):

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության կանոնադրական կապիտալի 561,252 հազ. դրամը կամ 36.79%-ը կազմում է «Գյուղ Կոոպ աջակցության» հիմնադրամի փայմասնակցությունը: Մյուս անդամների յուրաքանչյուրի փայմասնակցության չափը չի գերազանցում 1%-ը:

Կազմակերպության յուրաքանչյուր փայատեր ունի մեկ ձայնի իրավունք՝ անկախ ունեցած փայմասնակցության (փայերի քանակի) չափից:

2026թ. հունիսի 30-ի, 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության կողմից հետ գնված փայմասնակցություններ չեն եղել:

2026թ., 2025թ. և 2024թ. փայատերերի ժողովի ընթացքում Կազմակերպությունը շահաբաժիններ չի հայտարարել:

[2] Կազմակերպության փայատերերի տարեկան ընդհանուր ժողովի 2026թ.-ի մայիսի 14-ի որոշմամբ կազմակերպության կանոնադրական կապիտալը համալրվել է 29,107,000 (քսանինը միլիոն հարյուր յոթ հազար) ՀՀ դրամի չափով: Սույն փոփոխությունը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում 08.07.2026թ.-ին:

1.1.2. **Բիզնեսի համառոտ նկարագիրը**

Կազմակերպությունը տրամադրում է հիմնականում **ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառություններ**, իսկ սպառողական վարկերը կամ փոխառությունները՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով: Ընդ որում, Կազմակերպությունը սպասարկում է առավելապես **գյուղացիական տնտեսություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց**, որոնց չափանիշները սահմանվում են Կազմակերպության Դիտորդ Խորհրդի որոշմամբ:

Կազմակերպությունը վարկեր է տրամադրում և այլ ֆինանսական ծառայություններ է մատուցում առավելապես Հայաստանի Հանրապետության մարզերում՝

ա) գյուղմթերք արտադրողներին, վերամշակողներին,

բ) գյուղացիական տնտեսությունների գործառնական կարիքների բավարարմանն ուղղված և դրանց ուղղակիորեն առնչվող ծառայություններ մատուցողներին (կոոպերատիվներ, ընկերություններ, անհատ ձեռնարկատերեր),

գ) Հայաստանի Հանրապետության մարզերում մշտապես բնակվող և գյուղացիական տնտեսություն վարող անձանց,

դ) ագրոպարենային ոլորտում գործող ցանկացած այլ տնտեսվարող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:

Կազմակերպությունը տրամադրում է վարկեր Կազմակերպության անդամ ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին: Կազմակերպության անդամ փայատեր կարող են դառնալ այն քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք զբաղվում են գյուղատնտեսական մթերքի արտադրությամբ, վերամշակմամբ և հարակից այլ գործունեությամբ, առևտրային, արտադրական կամ ձեռնարկատիրական այլ գործունեությամբ:

Կազմակերպության անդամագրության կարգը հասանելի է Կազմակերպության կայքում՝ www.fca.am:

Ելնելով «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ հետագա աճի և զարգացման անհրաժեշտությունից՝ նպատակ ունենալով ընդլայնել ֆինանսական կապիտալ և ներդրողներ ներգրավվելու հնարավորությունները, «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ փայատերերի ընդհանուր ժողովը որոշել է վերակազմակերպվել փակ բաժնետիրական ընկերության:

ՓԲԸ-ի բաժնետերեր են լինելու «ԳյուղԿոոպ աջակցության» հիմնադրամը և նոր ստեղծվող «Ֆարմ Կրեդիտ Կոոպ» ոչ առևտրային կոոպերատիվը, որի փայատերեր են լինելու «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ մնացած բոլոր 11,825 փայատերերը իրենց ունեցած փայամասնակցությունների չափով:

Կազմակերպության Դիտորդ խորհուրդը հաստատել է ճանապարհային քարտեզ համաձայն որի առաջիկա տարում կիրականացվի վերակազամկերպումը:

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության կողմից հաճախորդներին տրամադրված վարկերի ծավալը կազմել է մոտ 18.1 մլրդ ՀՀ դրամ:

Կազմակերպությունն ունի 11 մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը: Մասնաճյուղերի ցանկը, հասցեներով ներկայացված է 3.3.1 մասում:

1.1.3. Ակտիվների համարժեքությունը և պիտանելիությունը

2026 թվականի I կիսամյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով՝ կազմակերպության ակտիվների շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունը ընդհանուր ակտիվների միջին մեծություն) կազմել է 1.3%[3], իսկ կապիտալի շահութաբերությունը (զուտ շահույթի հարաբերությունը կապիտալի միջին մեծությանը) նույն ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է՝ 9.1%[4]:

2024թ. և 2025թ. տարեկան անկախ աուդիտորական ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով կազմակերպության ակտիվների շահութաբերությունը կազմել է համապատասխանաբար՝ 1.06% և 0.86%, իսկ կապիտալի շահութաբերությունը համապատասխանաբար՝ 7.10% և 6.00%:

Լևերիջի գործակիցը (ընդհանուր ակտիվների մեծության հարաբերությունն ընդհանուր կապիտալի մեծությանը) 2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ՝ կազմել է 6.83:

Ստորև ներկայացվում է Կազմակերպության ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը.

հազ. ՀՀ դրամ

	30.06.2026թ.[5]	2025թ.	2024թ.
Ակտիվներ, այդ թվում	*20,948,124*	*20,399,721*	*18,644,618*
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում	*19,149,502*	*19,029,435*	*17,229,598*
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	17,946,655	17,798,315	15,901,513
Բանկերում ներդրված ժամկետային ավանդներ	419,642	-	-
Ներդրումային արժեթղթեր	1202847	1,231,120	1,328,085
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում	*91.4%*	*93.28%*	*92.41%*

Հաճախորդներին տրված վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում	*85.67%*	*87.24%*	*85.28%*

2026թ.-ի հունիսի 30-ի աուդիտ չանցած տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով կազմակերպության համախառն վարկային պորտֆելը կազմել է 18.1 մլրդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ թողարկողի վարկային պորտֆելում (ՖՀՄՄ) 90 օր և ավել

[3] Տարեկանացված

[4] Տարեկանացված

[5] 2026թ. տվյալները ներկայացված են հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից և աուդիտի կողմից ստուգված չեն:


ժամկետանցություն ունեցող վարկերի մասնաբաժինը կազմել է 0.10%:

Թողարկողը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որակյալ և արագ իրացվելի ակտիվների, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար:

1.1.4 Կազմակերպության կազմակերպչական կառուցվածքը

Կազմակերպությունը որևէ խմբի անդամ չէ:

Ստորև ներկայացվում է Կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը.



1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Ինչպես բոլոր տնտեսվարող սուբյեկտները, Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ: Ներդրողները մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը պետք է տեղյակ լինեն այդ ներդրման հետ կապված ռիսկերի մասին:

Ընդհանուր առմամբ, պարտատոմսերում ներդրում կատարողները բախվում են ինչպես թողարկող կազմակերպության գործունեության հետ կապված, այնպես էլ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից առաջացող ռիսկերի և պարտատոմսերի հետ կապված ռիսկերի հետ:

1.2.1. Թողարկողին առնչվող ռիսկեր

Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներից և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Կազմակերպությունը մշտապես զարգացնում է իր ֆինանսատնտեսական վիճակին սպառնացող ռիսկերի կառավարման արդյունավետությունը և որպես հիմնական ռիսկեր դիտարկում վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, գործընկերոջ (Counterparty Risk), գործառնական, տնտեսության վիճակի և օրենսդրության փոփոխություններով պայմանավորված ռիսկերը:

Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները, որոնք թողարկողից անկախ են: Նման ռիսկերից զերծ մնալու կամ հետևանքները նվազեցնելու նպատակով Թողարկողը մշակում է գործունեության անընդհատության ապահովման և արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգեր: Թողարկողի գործունեությանն առնչվող ռիսկերը կարող են հանգեցնել պարտատոմսերի գնի նվազմանը: Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները գնահատելու համար ներդրողները կարող են օգտվել Թողարկողի ինտերնետային կայքում հրապարակվող ֆինանսական հաշվետվություններից՝ www.fca.am:

Թողարկողի կողմից որպես առավել էական ռիսկեր են դիտարկվում.

Վարկային ռիսկը Կազմակերպության ֆինանսական վնաս կրելու ռիսկը, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները ընկերության նկատմամբ: Սա ազդում է վերջինիս գործունեության վրա, առաջացնում լրացուցիչ ծախսեր և բացասական անդրադառնում շահույթի վրա:

Իրացվելիության ռիսկը, ռիսկ, որ Կազմակերպույթունը չի ունենա բավարար իրացվելիություն սահմանված ժամկետներում ստանձնած պարտավորությունների դիմաց վճարում կատարելու համար:

Տոկոսադրույքի ռիսկը, այս ռիսկը տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխման արդյունքում ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է:

Արտարժութային ռիսկը, այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից:

Գործընկերոջ ռիսկի սահմանաչափն իրենից ներկայացնում է մեկ ֆինանսական հաստատության գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող է ունենալ: Կախված ռիսկի ծագման աղբյուրից՝ միջբանկային գործընկերոջ ռիսկը կարելի է տրոհել ռիսկերի հետևյալ տեսակների՝ մայր գումարի կորստի ռիսկ, փոխարինման ռիսկ, առաջին վճարողի ռիսկ և վճարման ռիսկ, թողարկողի ռիսկ:

Ընդհանուր տնտեսության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության վրա, մասնավորապես կարող է ուղեկցվել Կազմակերպության կողմից սպասվող եկամուտների նվազմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարություններով:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ ֆինանսական, մասնավորապես՝ վարկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վրա, որի պատճառով Թողարկողը չի կարող երաշխավորել պլանավորված շահույթի ստացումը:

Գործառնական ռիսկը, աշխատակիցների գործողությունների սխալների, տեխնիկական անսարքության և խարդախությունների հետևանքով ընկերության մոտ առաջացող միջոցների կորստի հավանականությունն է:

Առաջին վճարողի ռիսկ և վճարման ռիսկ: Հաճախ իմաստ ունի տարանջատել այս երկու կատեգորիաները, քանի որ որոշ գործառնությունների գծով գործընկերոջ ռիսկը տարբեր է գործարքի կյանքի ընթացքում: Այն գործարքների դեպքում, երբ կողմերից երկուսն էլ փոխանակում են դրամական հոսքեր, ռիսկն ավելի բարձր է գործարքով նախատեսվող վճարումների իրականացման օրը (երբ Ընկերությունն իրականացնում է վճարումն առանց ստանալու հաստատումը, որ գործընկերոջ հանդիպակաց վճարումը հաշվեգրված է), քան վճարումների օրվան նախորդող ժամանակաշրջանում, երբ Ընկերությունը հնարավորություն ունի զերծ մնալ իր վճարումների կատարումից, եթե ակնհայտ է, որ գործընկերը չի կատարելու իր վճարումը:

Համաճարակների ռիսկ: Գյուղատնտեսության որոշ ենթաճյուղերում առկա է համաճարակային բռնկումների ռիսկը, որը կարող է հանգեցնել ֆերմերային տնտեսության մասամբ կամ ամբողջովին կորստին: Այս ռիսկը առկա է հատկապես անասնապահության մասով՝ խոզաբուծություն, թռչնաբուծություն, ձկնաբուծություն: Ֆարմ Կրեդիտը ցուցաբերում է զգուշավոր մոտեցում այս հարցում: Նշված բարձր ռիսկային ոլորտներում կազմակերպությունը չի իրականացնում վարկավորում, կամ իրականացնում է միայն այն դեպքում, երբ ֆերմերային տնտեսությունը ինքը արդեն դիվերսիֆիկացված է: Այսինքն, տվյալ ռիսկային ոլորտը ֆերմերի ընդհանուր տնտեսության մեջ կազմում է 50 տոկոսից պակաս: Այնուամենայնիվ, այս ռիսկի բարձր

զգայունություն ունեցող ճյուղերում ներդրումները կազմակերպության վարկային պորտֆելում կազմում են 1-2 տոկոս:

Ինչպես արդեն վերևում նշեցինք կազմակերպությունը չափազանց կարևորում է ինչպես սեփական վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան ըստ տնտեսության (այս դեպքում գյուղատնտեսության) ճյուղերի, այնպես էլ յուրաքանչյուր ֆերմերային տնտեսության ներքին դիվերսիֆիկացիան ըստ ոլորտների, ըստ մատակարարների կամ մթերողների, և այլն:

Կան նաև գլոբալ ռիսկեր, որոնք կարող են իրենց ազդեցությունը ունենալ գյուղատնտեսության և հատկապես վարկավորման վրա: Այս առումով իրավական ռիսկը առաջանում է պայմանավորված օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների հետևանքով: Մասնավորապես, հարկային դրույքաչափերի փոփոխությունը կամ նոր հարկատեսակի կիրառումը, առանձին ոլորտներում գործունեություն ծավալելու մասով սահմանափակումների կիրառումը կամ նոր կանոնների սահմանումը, միջպետական համաձայնագրերի կնքումը կամ կասեցումը, միջազգային համագործակցության հարթակներում տարբեր սանկցիաների կիրառումը կամ կասեցումը, և այլ իրավական փոփոխությունները կարող են առաջացնել ռիսկեր իրենց կարճաժամկետ կամ երկարաժամկետ ազդեցություններով:

1.2.2. Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Կազմակերպությունը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար:

Ներդրողը պետք է գիտակցի, որ Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով: Այնուամենայնիվ, Թողարկողը տեղեկացնում է նաև, որ իր գործունեությամբ նպաստելու է պարտատոմսերի շուկայի զարգացմանն՝ ակտիվություն ցուցաբերելով պարտատոմսերի թողարկման և ֆոնդային բորսայում դրանց ցուցակման շնորհիվ:

Հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման

հետևանքով, այդ թվում՝ Պարտատոմսերի Շուկա ստեղծողի ծառայություններ մատուցող անձի (անձանց) բացակայության հետևանքով:: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Շուկայական ռիսկ: Շուկայական փոփոխականների (տոկոսադրույքներ, արտարժութային փոխարժեքներ) տատանման հետևանքով ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ իրական արժեքի տատանման և դրա հետևանքով վնաս կրելու հավանականությունն է: Այն կարող է ի հայտ գալ տնտեսությունում պարտատոմսերի գնի վրա ազդող գործոնների փոփոխության դեպքում:

Իրացվելիության ռիսկ. Սա կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Արտարժութային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Սույն ռիսկը, հատկապես առնչվելի է այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերի ձեռքբերման և մարման դիմաց ստացվող գումարները փոխանակելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

Տոկոսադրույքի ռիսկը: Շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գնի և եկամտաբերության վրա, քանի որ պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Ներգրաված միջոցների օգտագործում: Պետք է դիտարկել Ազդագրի 2.2. Հիմնական տեղեկատվություն բաժնում նշված տեղեկատվությունը և ինքնուրույն որոշել այդ տեղեկատվության կարևորությունը պարտատոմսերում ներդրում անելու հարցում:

Վերաներդրման ռիսկ: Այն բոլոր ներդրողները, որոնք թողարկողի պարտատոմսերը ձեռք կբերեն դրանք մինչև մարումը պահելու և ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ, որը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտներին առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Ներդրողները նաև իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկը պարտատոմսերի վաղաժամկետ մարման դեպքում (համաձայն Ազդագրի 2.3.4 կետի), որը պայմանավորված է վաղաժամկետ մարման գումարը առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

Սոցիալական պարտատոմսերի թողարկումն իրականացվում է Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (International capital market association - ICMA) կողմից հրապարակված սոցիալական պարտատոմսերի սկզբունքների (Social bond principles) համաձայն: ՀՀ-ում սոցիալական պարտատոմսերի թողարկումը կարգավորող տաքսոնոմիա առկա չէ, դրա ընդունվելու դեպքում հնարավոր են որոշակի տարբերություններ ICMA -ի դրույթների հետ:

1.3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է որդեգրած ռազմավարությանը համաձայն: Կազմակերպության գործունեությունը մշտապես գտնվում է Կազմակերպության Դիտորդ խորհրդի և գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Կազմակերպության կողմից առաջարկվող ծառայությունները և դրանց սակագները շուկայի պահանջներին:

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության ակտիվները նախորդ տարվա վերջի համեմատ աճել են 2.69%ով կամ 548.4մլն ՀՀ դրամով՝ կազմելով 20.95 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2025թ. վերջի դրությամբ Կազմակերպության ակտիվները նախորդ տարվա նկատմամբ աճել էին 1,755 մլն ՀՀ դրամով կամ 9.41%ով՝ կազմելով՝ 20.4 մլրդ ՀՀ դրամ:

Դիտարկվող ժամանակաշրջանի վերջում Կազմակերպության պարտավորությունների ծավալը կազմել է 17.9 մլրդ ՀՀ դրամ՝ 2025թ. վերջի համեմատ աճելով 2.35%-ով կամ 410.6 մլն ՀՀ դրամով: 2025թ. վերջի դրությամբ պարտավորությունների ծավալը կազմել է 17.5 մլրդ ՀՀ դրամ՝ 2024թ. դեկտեմբերի 31–ի համեմատ աճելով 1.5 մլրդ ՀՀ դրամով կամ 9.51 %-ով:

Կազմակերպության ընդհանուր կապիտալը 2026թ. հունիսի 30-ի դրությամբ նախորդ տարվա վերջի համեմատ աճել է 137.8 մլն ՀՀ դրամով կամ 4.71 %-ով և կազմել 3.06 մլրդ ՀՀ դրամ: Կազմակերպության ընդհանուր կապիտալը 2025թ. դեկտեմբերի 31–ի դրությամբ 2024թ. դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 238.2մլն դրամով կամ 8.86%-ով՝ կազմելով 2.9 մլրդ ՀՀ դրամ:

2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունն ունեցել է 137.8 մլն զուտ շահույթ: Կապիտալի և ակտիվների շահութաբերության ցուցանիշները 2026 թվականի հունիսի 30-ին կազմել են համապատասխանաբար 9.20% և 1.33%[6], իսկ 2025 թվականին կազմել են համապատասխանաբար՝ 6.00% և 0.86%:

[6] 2026 թվականի առաջին կիսամյակի ցուցանիշները տարեկանացված են

Կազմակերպության կանոնադրական կապիտալը Ազդագիրը ՀՀ ԿԲ ներկայացնելու պահին կազմում է 1,554,730,332.5 ՀՀ դրամ: Կազմակերպության կանոնադրական կապիտալը 2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ կազմել է 1,525,623 հազար ՀՀ դրամ:

2026թ. հունիսի 30-ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագրի գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

Ազդագրի ԿԲ գրանցման ներկայացման օրվա դրությամբ Թողարկողի գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, Կազմակերպության դեմ չկան և չեն սպասվում դատական հայցեր, որոնք կարող են նյութական, բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական վիճակի կամ Կազմակերպության զարգացման հեռանկարների վրա:

Հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	30.06.2026 (աուդիտ չանցած)	2025 (աուդիտ անցած)	2024 (աուդիտ անցած)
Ակտիվներ	20,948,124	20,399,721	18,644,618
Պարտավորություններ	17,882,225	17,471,630	15,954,734
Կապիտալ	3,065,899	2,928,091	2,689,884

Հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	30.06.2026 (աուդիտ չանցած)	2025 (աուդիտ անցած)	2024 (աուդիտ անցած)
Զուտ տոկոսային եկամուտ	823,038	1,501,259	1,278,914
Զուտ գործառնական եկամուտ	777,022	1,325,162	1,217,049
Զուտ շահույթ/վնաս	137,808	168,441	181,463

Հիմնական տնտեսական նորմատիվներ 30/06/2026**թ. դրությամբ**

Նորմատիվներ (հազ. դրամ)	**Փաստացի մեծությունը**	**ՀՀ ԿԲ սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը**	**Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը**
Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	1,525,623	150,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	3,494,903	150,000	Խախտում առկա չէ
Ն1 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների	18.9%	12.0%	Խախտում

գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը			առկա չէ
Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	5.8%	25.0%	Խախտում առկա չէ
Ն51 պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը		10%	Խախտում առկա չէ
Ն52 պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը		5.1%	Խախտում առկա չէ

1.4. Թողարկողի աուդիտն իրականացնող անձ

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր տարի իր ֆինանսական հաշվետվություններն աուդիտի ենթարկելու նպատակով հրավիրում է արտաքին աուդիտ: Աուդիտորական կազմակերպությանն ընտրությունն իրականացվում է մրցույթի հայտարարման միջոցով, ինչի արդյունքում էլ նկատելի հանգամանք է վերջինիս փոփոխությունը:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: Աուդիտորական կազմակերպության եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

Կազմակերության 2024-2025**թթ.** Ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է **«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ**-ն, որի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0015, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 9-րդ շենք («Երևան Պլազա» բիզնես-կենտրոնի շենքում), հեռ. (+374)10 500 964, ինտերնետային կայք՝ www.grantthornton.am, կազմակերպության տնօրեն՝ Արմեն Հովհաննիսյան: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեշնլի» անդամ:

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ -ի՝ 2024-2025թթ. եզրակացությունները ներկայացված են Ազդագրին կից Հավելվածներում:

Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Կազմակերպության աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

1.5. Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և բաժնետերերը

Թողարկողի կանոնադրությամբ սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները՝

- **Փայատերերի ընդհանուր ժողով (այսուհետ նաև՝ Ընդհանուր ժողով)**, որը կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է,

- **Դիտորդ խորհուրդ (այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, որն ընտրվում է կազմակերպության Ընդհանուր Ժողովում,
- **Գլխավոր գործադիր տնօրեն:**

Կազմակերպության Դիտորդ խորհուրդը բաղկացած է վեց անդամից և երկու անկախ անդամից.

	Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1.	Սերյոժա Հայրապետյան	Դիտորդ խորհրդի նախագահ	ավելի քան 20 տարի
2.	Արտավազդ Խաչատրյան	Դիտորդ խորհրդի անդամ	ավելի քան 14 տարի
3.	Ռաֆիկ Օհանյան	Դիտորդ խորհրդի անդամ	ավելի քան 19 տարի
4.	Ռոլանդ Սուսունյան	Դիտորդ խորհրդի անդամ	ավելի քան 8 տարի
5.	Արմեն Ստեփանյան	Դիտորդ խորհրդի անդամ	ավելի քան 8 տարի
6.	Էդվարդ Պետրոսյան	Դիտորդ խորհրդի անդամ	ավելի քան 13 տարի
7.	Հարություն Զաքոյան	Դիտորդ խորհրդի անկախ անդամ	ավելի քան 28 տարի
8.	Քնարիկ Պետրոսյան	Դիտորդ խորհրդի անկախ անդամ	ավելի քան 10 տարի

Թողարկողի կառավարմանը մասնակցող անձինք են.

	Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1.	Արմեն Գաբրիելյան	Գլխավոր Գործադիր Տնօրեն/Նախագահ	ավելի քան 32 տարի
2.	Մուշեղ Պետրոսյան	Գլխավոր Գործադիր Տնօրենի Տեղակալ/Գործառնական տնօրեն	ավելի քան 27 տարի
3.	Անի Սարգսյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/ Ֆինանսական տնօրեն	ավելի քան 22 տարի
4.	Հրանտ Եղիազարյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/ Վարկային տնօրեն	ավելի քան 25 տարի
5.	Արսեն Լոբյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/Տարածքային զարգացման գծով տնօրեն	ավելի քան 18 տարի
6.	Հրաչուհի Հովհաննիսյան	Գլխավոր հաշվապահ	ավելի քան 26 տարի
7.	Մեսրոբ Ավագյան	Ներքին աուդիտի բաժնի պետ	ավելի քան 28 տարի

Կազմակերպության աշխատակիցների թիվը 2026 թվականի հունիսի 30-ի վերջի դրությամբ կազմել է 100 աշխատող, 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների միջին թվաքանակը՝ 100 աշխատող (2024թ.՝ 92):

2026թ. հունիսի 30-ի դրությամբ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ կանոնադրական կապիտալի 561,252 հազ. դրամը կամ 36.79%-ը կազմում է «Գյուղ Կոոպ աջակցության» հիմնադրամի փայմասնակցությունը: Մյուս անդամների յուրաքանչյուրի փայմասնակցության չափը չի գերազանցում 1%-ը:

Կազմակերպության յուրաքանչյուր փայատեր ունի մեկ ձայնի իրավունք՝ անկախ ունեցած փայմասնակցության (փայերի քանակի) չափից:

2026թ. հունիսի 30-ի և 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության կողմից հետ գնված փայմասնակցություններ չեն եղել:

1.6. Թողարկողի կողմից առաջարկվող սոցիալական պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները

Պարտատոմսերի տեսակը՝	անվանական արժեկտրոնային	
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝	եռամսյակային	
Պարտատոմսերի ձևը՝	ոչ փաստաթղթային	
Պարտատոմսերի փոխարկելիությունը՝	ոչ փոխարկելի	
Պարտատոմսերի թողարկման արժույթը՝	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով	
Պարտատոմսերի թողարկման ծավալը՝	Մինչև 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ	
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի քանակը՝	Համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի	
Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը՝	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով	
Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով	

Պարտատոմսերի տոկոսադրույքը՝	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով
Պարտատոմսերի շրջանառության ձևը՝	Տեղաբաշխումից հետո արժեթղթերի առուվաճառքը երկրորդային շուկայում կարող է իրականացվել բացառապես կարգավորվող շուկայում: Ազդագիրը ԿԲ գրանցման ներկայացնելու պահի դրությամբ Պարտատոմսերի երկրորդային շուկայում իրացվելիություն ապահովելու (շուկա ստեղծող հանդիսանալու) մասով պարտավորություն ունեցող անձինք բացակայում են:
Պարտատոմսերի ապահովվածությունը	Պարտատոմսերը կարող են լինել առանց ապահովման կամ երրորդ անձի երաշխավորությամբ ապահովված: Առանց ապահովվածության կարող է լինել կանոնադրական կապիտալի չափով թողարկված մասը, իսկ մնացած մասը՝ ամբողջությամբ ապահովվածությամբ համաձայն գործող օրենսդրության:
Այլ	Յուրաքանչյուր տրանշի համար կազմակերպության Դիտորդ խորհուրդը կարող է սահմանել լրացուցիչ ֆինանսական նորմատիվների ցուցանիշներ, որոնք պետք է պահպանվեն տվյալ տրանշի ամբողջ ընթացքում:

Կազմակերպության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն օգտագործվելու են գյուղական տնտեսությունների, ֆերմերների, կին ձեռնարկատերերի և ՓՄՁ-ների ֆինանսավորման համար (Ազդագրի 2.2. Հիմնական տեղեկատվություն կետին համաձայն):

1.6.1. ***Վերջնական պայմանների հրապարակման ձևը***

Պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները ենթակա են որոշման «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Դիտորդ Խորհրդի կողմից, յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի թողարկման պայմանները ենթակա են հրապարակման հրապարակային տեղաբաշխումը սկսելուց առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ: Թողարկման պայմանները հրապարակվելու են Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.fca.am , www.araratbank.am:

1.7. Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ՝ Բորսա) տեղաբաշխման համակարգով՝ Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:

Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի թողարկման պայմանները տեղաբաշխման օրվանից առնվազն 2 աշխատանքային օր առաջ հրապարակվելու են Թողարկողի, ինչպես նաև Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ համապատասխանաբար՝ www.fca.am, www.araratbank.am:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրելու նպատակով Թողարկողը տասը աշխատանքային օրվա ընթացքում դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ: Հարկ է նշել, որ որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրման հայտը հնարավոր է չբավարարվի: Պարտատոմսերի թողարկմանը հաջորդող 12 ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Թողարկողի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ արժեկտրոնի հաշվեգրված գումարները:

1.8. Այլ էական տեղեկություններ

Թողարկողի ֆինանսական հաշվետվությունները հասանելի են Թողարկողի պաշտոնական կայքում՝ www.fca.am , ինչպես նաև Ազդագրին կից Հավելվածներում:

1.9. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները

հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	30.06.2026 **(աուդիտ չանցած)**	2025 **(աուդիտ անցած)**	2024 **(աուդիտ անցած)**
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	137,808	168,441	181,463
Սեփական կապիտալի միջին մեծություն	2,996,995	2,808,988	2,556,405
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	9.10%	6.00%	7.10%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	137,808	168,441	181,463
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	20,673,923	19,522,170	17,147,702

Ակտիվների շահութաբերություն (ROA), %	1.30%	0.86%	1.06%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	137,808	168,441	181,463
Գործառնական եկամուտ	794,960	1,501,259	1,278,914
Զուտ շահույթի մարժա (NPM), %	17.34%	11.22%	14.19%
Գործառնական եկամուտ	794,960	1,501,259	1,278,914
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	20,673,923	19,522,170	17,147,702
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	7.69%	7.69%	7.46%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	20,673,923	19,522,170	17,147,702
Սեփական կապիտալի միջին մեծություն	2,996,995	2,808,988	2,556,405
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	6.90	6.95	6.71
Զուտ տոկոսային եկամուտ	823,038	1,501,259	1,278,914
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	19,299,290	18,129,517	15,781,793
Զուտ տոկոսային մարժա (NIM)	8.5%	8.28%	8.10%
Տոկոսային և կոմիսիոն եկամուտ	1,482,214	2,784,449	2,373,409
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	19,299,290	18,129,517	15,781,793
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	15.36%	15.35%	15.03%
Տոկոսային ծախսեր	659,176	1,283,190	1,094,495
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	17,749,536	17,325,801	15,833,466
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	7.42%	7.41%	6.91%
Տոկոսային և կոմիսիոն եկամուտ	1,482,214	2,784,449	2,373,409
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	19,299,290	18,129,517	15,781,793
Տոկոսային ծախսեր	659,176	1,283,190	1,094,495
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	17,542,820	17,134,373	15,600,807
ՍՊՐԵԴ	7.85%	7.87%	8.02%

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Ռիսկային գործոններ

Արժեթղթերում՝ ներառյալ պարտատոմսերում, ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, այդ իսկ պատճառով, ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել, որ Ազդագրում ներկայացված ռիսկերից բացի կարող է նաև առաջանալ այլ անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ ռիսկ, և ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Թողարկողի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի իրացվելիության և, հետևաբար, գնի անկմանը:

2.1.1. Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Կազմակերպությունը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար:

Ներդրողը պետք է գիտակցի, որ Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով: Այնուամենայնիվ, Թողարկողը տեղեկացնում է նաև, որ իր գործունեությամբ նպաստելու է պարտատոմսերի շուկայի զարգացմանը՝ ակտիվություն ցուցաբերելով պարտատոմսերի թողարկման և ֆոնդային բորսայում դրանց ցուցակման շնորհիվ:

Պարտատոմսերին առնչվող հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել հետևյալները.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը պարտատոմսերի շուկայի ծավալի և ցածր զարգացվածության պայմաններում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների առաջացումն է, այդ թվում՝ Պարտատոմսերի Շուկա ստեղծողի ծառայություններ մատուցող անձի (անձանց) բացակայության հետևանքով: Վերջինս կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռքբերման գինը:

Արտարժութային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Ուստի, այս իմաստով արտարժութային ռիսկ կարող են կրել այն ներդրողները, ովքեր իրենց դրամական միջոցները սույն պարտատոմսերում ներդնելու նպատակով ստիպված կլինեն իրենց ֆինանսական միջոցները փոխարկել այլ արժույթներից ՀՀ դրամի:

Տոկոսադրույքի ռիսկը: Տոկոսադրույքի փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների կորուստներ կրելու վտանգն է, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, այն կարող է ազդել ինչպես պարտատոմսի գնի, եկամտաբերության, այնպես էլ դրանց գրավչության և իրացվելիության վրա:

Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Վերաներդրման ռիսկ: Այն բոլոր ներդրողները, որոնք թողարկողի պարտատոմսերը ձեռք կբերեն դրանք մինչև մարումը պահելու և ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ, որը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտներին առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Ներդրողները նաև իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկը պարտատոմսերի վաղաժամկետ մարման դեպքում (համաձայն Ազդագրի 2.3.4 կետի), որը պայմանավորված է վաղաժամկետ մարման գումարը առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Ներգրաված միջոցների օգտագործում: Հիմք ընդունելով Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (International Capital Market Association - ICMA) կողմից հրապարակված Սոցիալական պարտատոմսերի սկզբունքները (Social Bond Principles)՝ պարտատոմսերի տեղաբաշխումից ներգրավված միջոցներն ուղղվելու են Թողարկողի Սոցիալական պարտատոմսերի հայեցակարգով (Social Bond Framework) սահմանված հետևյալ սոցիալական և

կայուն զարգացման նպատակային ուղղությունների ֆինանսավորմանն ու վերաֆինանսավորմանը.

1. Գյուղատնտեսական վարկերի տրամադրում փոքր չափի ֆերմերային տնտեսություններին,
2. Գյուղական ՓՄՁ և ագրոբիզնեսի ֆինանսավորում,
3. Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգ:

Թողարկողների համապատասխանությունը սոցիալական պարտատոմսերի սկզբունքների հիմնական պահանջներին հաստատելու նպատակով, վերջիններս պետք է ենթարկվեն արտաքին անկախ վերանայման: Թողարկողի պահանջով 2026թ. հոկտեմբերին Fitch Ratings ընկերությունը հրապարակել է «Արտաքին կողմի կարծիք» (Second Party Opinion) Թողարկողի Սոցիալական պարտատոմսերի հայեցակարգի վերաբերյալ: Արտաքին կողմի կարծիքը և Հայեցակարգը հրապարակված են Թողարկողի պաշտոնական կայքի «Պարտատոմսեր» բաժնում:

Արտաքին կողմի կարծիքը ներառված չէ Ազդագրում և չի կազմում դրա մաս: Թողարկողը չի տրամադրում որևէ հավաստում Արտաքին կողմի կարծիքի համապատասխանության վերաբերյալ:

Արտաքին կողմի կարծիքը ենթակա չէ որևէ հատուկ կարգավորման կամ այլ ռեժիմի կամ վերահսկողության, չի հանդիսանում արժեթղթերի գնելու, վաճառելու կամ պահելու առաջարկ և ուժի մեջ է մտնում Պարտատոմսերի թողարկման տրամադրման օրվանից: Արտաքին կողմի կարծիքի հետ կանչելը կարող է ազդել Պարտատոմսերի արժեքի վրա և/կամ հետևանքներ ունենալ ներդրումային քաղաքականությամբ սոցիալական ակտիվներում ներդրումներ կատարելու հանձնառություն ունեցող որոշ ներդրողների համար:

Թողարկողը պարտավորվել է պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցները օգտագործել որոշակի նպատակներով և ներկայացնել հաշվետվություններ, ինչպես ներկայացված է Ազդագրի 2.2. Հիմնական տեղեկատվություն բաժնում:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Թողարկողի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող ընդհանուր իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

Սոցիալական պարտատոմսերի թողարկումն իրականացվում է Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (International capital market association - ICMA) կողմից հրապարակված սոցիալական պարտատոմսերի սկզբունքների (Social bond principles) համաձայն: ՀՀ-ում սոցիալական պարտատոմսերի թողարկումը կարգավորող տաքսոնոմիա առկա չէ, դրա ընդունվելու դեպքում հնարավոր են որոշակի տարբերություններ ICMA -ի դրույթների հետ:

2.2. Հիմնական տեղեկատվություն

2.2.1. Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը

Ընկերության սոցիալական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական

միջոցներն ուղղվելու են վարկային պորտֆելի աճի ֆինանսավորմանը, մասնավորապես՝ գյուղատնտեսական վարկերի տրամադրմանը, կին ձեռներեցների, երկրորդ սերնդի և երիտասարդ ֆերմերների, ինչպես նաև ՓՄՁ-ների ֆինանսավորմանը:

Պարտատոմսերը թողարկվելու են Թողարկողի Սոցիալական պարտատոմսի հայեցակարգի (այսուհետ՝ Հայեցակարգ) ներքո:

Հայեցակարգի շրջանակներում սոցիալական պարտատոմսերի թողարկումը նպատակ ունի.

- դիվերսիֆիկացնել Ֆարմ Կրեդիտ-ի ֆինանսավորման աղբյուրները Հայաստանի կապիտալի շուկայի միջոցով.
- բարձրացնել տեղական արժույթով երկարաժամկետ ֆինանսավորման հասանելիությունը «Որակավորված սոցիալական ծրագրերի» համար (ESP);
- ընդլայնել գյուղական տնտեսությունների, ֆերմերների, կին ձեռնարկատերերի և գյուղական ՓՄՁ-ների ֆինանսավորումը.
- ֆինանսական միջոցների տեղաբաշխման և ազդեցության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման միջոցով բարձրացնել թափանցիկությունը ՝ ԿՇՄԱ (ICMA) Սոցիալական Պարտատոմսերի Սկզբունքների (2025) համապատասխան.
- ընդլայնել Ֆարմ Կրեդիտ-ի հասանելիությունը ESG ուղղվածություն ունեցող և ազդեցությանն ուղղված ներդրողների շրջանում:

Հետևաբար, սոցիալական պարտատոմսերի թողարկումը Ֆարմ Կրեդիտ-ի գործող բիզնես մոդելի և ֆինանսավորման ռազմավարության բնական շարունակությունն է, որը հնարավորություն է տալիս կոոպերատիվին հետագայում ընդլայնել իր սոցիալական ազդեցությունը՝ դիվերսիֆիկացնելով ֆինանսավորման աղբյուրները Հայաստանի կապիտալի ներքին շուկայի միջոցով: Հայեցակարգի ներքո թողարկված Սոցիալական պարտատոմսերի միջոցները կհատկացվեն բացառապես Հայեցակարգի «Որակավորված սոցիալական» ծրագրերին:

Հայեցակարգի շրջանակներում Որակավորված սոցիալական ծրագրերի կատեգորիաներն են՝

1. **Գյուղատնտեսական վարկերի տրամադրում փոքր չափի ֆերմերային տնտեսություններին**
   ICMA **Կատեգորիաներ**. *Սոցիալ-տնտեսական առաջընթաց և հզորացում; Պարենային անվտանգություն*
2. **Գյուղական ՓՄՁ և ագրոբիզնեսի ֆինանսավորում**
   ICMA **Կատեգորիաներ**. *Զբաղվածության ստեղծում; Պարենային անվտանգություն*
3. **Կանանց տնտեսական հզորացում**
   ICMA **Կատեգորիաներ**. *Պարենային անվտանգություն*

Սոցիալական պարտատոմսերի միջոցները հատուկ ուղղվելու են փոքր և ընտանեկան ֆերմերներին, կին վարկառուներին/կանանց կողմից ղեկավարվող ձեռնարկություններին, երիտասարդներին / երիտասարդ, սկսնակ, փոքր ֆերմերներին, ագրոբիզնեսի արժեշղթային, գյուղական ՓՄՁ-ներ-ին:

Սոցիալական պարտատոմսերի հայեցակարգը հասանելի է Թողարկողի կայքում հետևյալ հղումով՝ https://www.fca.am/images/FCA_Social_Bond_Framework_2026_Updated_V2_ARM.pdf :

Fitch Ratings-ի կողմից պատրաստված Արտաքին կողմի կարծիքը (Second Party Opinion) հասանելի է Թողարկողի կայքի Պարտատոմսեր բաժնում:

Թողարկողը սոցիալական պարտատոմսերի շրջանառության ժամկետի ողջ ընթացքում հրապարակելու է տարեկան հաշվետվություն պարտատոմսերի միջոցների բաշխման և պորտֆելի սոցիալական ազդեցության վերաբերյալ: Հաշվետվությունները հանրությանը հասանելի կլինեն Թողարկողի պաշտոնական կայքում: Հաշվետվողականության շրջանակներում Թողարկողը կհրապարակի Տեղաբաշխման վերաբերյալ հաշվետվություն, որը ներառելու է՝

Բացահայտման կետ	Մանրամասներ
Հավաքագրված ընդհանուր զուտ միջոցները	Ըստ պարտատոմսերի շարքի և արժույթի
ESP պորտֆելին հատկացված ընդհանուր գումարը	Բացարձակ մեծությամբ և միջոցների տոկոսով
Չտեղաբաշխված գումարներ	Օգտագործված գումարը և ժամանակավոր ներդրումային գործիքները
Բաշխում ըստ ESP կատեգորիայի	Յուրաքանչյուր կատեգորիայի համար հատկացված գումարը և վարկերի քանակը
Բաշխում ըստ թիրախային բնակչության	կին վարկառուներ %, Երիտասարդ, սկսնակ, փոքր ֆերմերներ %, գյուղական ՓՄՁ-ներ %
Աշխարհագրական բաշխում	Տեղաբաշխում ըստ մարզերի
Նախկինում տրամադրված վարկերի բաշխում (Look-back)	Վերաֆինանսավորմանը հատկացված միջոցների գումարը և տոկոսը
Բաշխում ըստ արժույթի	ՀՀ դրամ VS ԱՄՆ դոլար տեղաբաշխում

Ֆինանսական միջոցների տեղաբաշխման հաշվետվության հետ մեկտեղ (կամ դրա կազմում) Թողարկողը կհրապարակի նաև Ազդեցության հաշվետվություն՝ բացահայտելով ESP-ի պորտֆելի կողմից ձեռք բերված սոցիալական արդյունքներն ու ցուցանիշները: Ազդեցության հաշվետվության հիմնական չափորոշիչները ներկայացված են Հայեցակարգում:

Ո՛չ Սոցիալական պարտատոմսերի հայեցակարգը, ո՛չ Արտաքին կողմի կարծիքը ներառված չեն սույն Ազդագրում, չեն կազմում դրա մաս և չեն հանդիսանում պարտատոմսերը գնելու, վաճառելու կամ պահելու առաջարկ:

Ֆիզիկական անձ ներդրողներին հայտնում ենք, որ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

2.3. Տեղեկատվություն առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ պարտատոմսերն անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր են, որոնց թողարկումն իրականացվում է ՀՀ օրենսդրության համաձայն, և դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պարտատոմսերի ռեեստրը վարվելու է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից:

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, Վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 7.5 և 7.6 կետերի պահանջները «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ-ն 2026թ. օգոստոսի 18-ին դիմում է ներկայացրել ՀՀ ԿԲ՝ ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելու նպատակով պարտատոմսերի թողարկում և հրապարակային տեղաբաշխում իրականացնելու համար բավարարում ստանալու նպատակով:

Ընկերության կողմից ներկայացված դիմումի ուսումնասիրության արդյունքներով և հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, Վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 7.14 կետը 2026թ. սեպտեմբերի 14-ին ՀՀ Կենտրոնական բանկը տեղեկացրել է, որ Ընկերության կողմից մինչև 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմսերի թողարկում և հրապարակային տեղաբաշխում իրականացնելու վերաբերյալ առարկություն չունի: Ընդ որում թողարկման ծավալի մի մասը՝ կանոնադրական կապիտալի չափով, լինելու է առանց ապահովվածությամբ, իսկ մնացած մասը՝ ապահովվածությամբ: Թողարկումը նախատեսվում է իրականացնել մի քանի տրանշերով: Պարտատոմսերի թողարկման արժույթը, արժեկտրոնային տոկոսադրույքը, շրջանառության ժամկետը և այլ էական պայմանները ենթակա են որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով: Ապահովված պարտատոմսերի թողարկման մանրամասները, ներառյալ ապահովվածություն տրամադրող անձի վերաբերյալ տեղեկատվությունը և բոլոր էական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի խորհրդի կողմից, որի տեղաբաշխումը կիրականացվի ազդագրի լրացման միջոցով՝ ՀՀ ԿԲ հաստատումից հետո:

2.3.1. Սոցիալական պարտատոմսերի պայմանները

Պարտատոմսերի տեսակը	Անվանական արժեկտրոնային
Պարտատոմսերի ձևը	Ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի փոխարկելիությունը	Ոչ փոխարկելի
Պարտատոմսերի թողարկման արժույթը	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով

Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	100,000 (Մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	Մինչև 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ	
Պարտատոմսերի քանակը	Համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի	
Թողարկման և տեղաբաշխման օրը	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով	
Տեղաբաշխման ձևը	Չերաշխավորված	
Պարտատոմսերի շրջանառության ժամկետը	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով	
Արժեկտրոնի եկամտաբերությունը		
Պարտատոմսերի ռեեստրը	Պարտատոմսերի ռեեստրը ենթակա է վարման «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ ՀԿԴ) կողմից:	
Պարտատոմսերի ապահովվածությունը	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով	
Տեղաբաշխող	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ, համաձայն Թողարկողի և «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ միջև 03.08.2026թ. կնքված Համագործակցության պայմանագրի և չերաշխավորված եղանակով արժեթղթերի տեղաբաշխման մասին համաձայնագրի:	
Շուկա Ստեղծող	Կազմակերպությունը նախատեսում է օգտվել Շուկա ստեղծողի ծառայություններից	
Պարտատոմսերի տեղաբաշխումը	Պարտատոմսերը տեղաբաշխվում են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով: Աճուրդի տևողության, ինչպես նաև աճուրդի անցկացման այլ մանրամասները յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվեն «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով	
Թողարկումը	Համաձայն պարտատոմսերի թողարկման վերաբերյալ Թողարկողի Դիտորդ Խորհրդի կողմից 20.07.2026թ.-ին ընդունված թիվ 05 որոշման:	

Արժեկտրոնների վճարման պարբերականությունը	եռամսյակային (4 անգամ օրացուցային տարվա մեջ)
Արժեկտրոնների հաշվարկման օրերը	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով
Օրերի հաշվարկման պայմանականությունը	փաստացի/փաստացի DCS=Օրերի փաստացի քանակը, D2M2Y2 - D1M1Y1 DCC=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1 DSN=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2 որտեղ՝ D1M1Y1 գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է. D2M2Y2 գործարքի կատարման ամսաթիվն է D3M3Y3 գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:
Արժեկտրոնի կուտակումը	$AI = FV * \frac{C}{f} * \frac{DCS}{DCC}$ որտեղ AI - կուտակված տոկոս, FV - պարտատոմսերի անվանական արժեք, C - արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույք, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է մեկ տարում Արժեկտրոնի կուտակումը սկսում է հաշվարկվել պարտատոմսերի թողարկման օրվանից,
Պարտատոմսերի գինը	Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով $DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{FV}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$ $\tau = \frac{DSN}{DCC}$

	որտեղ՝ DP - Պարտատոմսի գինն է, DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է, DCC -գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է մեկ տարում N -հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը C - միավոր պարտատոմսի տարեկան արժեկտրոնը y - մինչև մարում եկամտաբերություն, i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից, FV- պարտատոմսի անվանական արժեք:
Պարտատոմսերի եկամտաբերությունը	Պարտատոմսերի եկամտաբերությունը հաշվարկվում է նախորդ կետում ներկայացված բանաձևի միջոցով
Պարտատոմսերի մարման օրը	Ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով
Արժեկտրոնների վճարումը և պարտատոմսերի մարումը	ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար արժեկտրոնների վճարումը և պարտատոմսերի մարումն իրականացվում է ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով: ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար արժեկտրոնների վճարումը և մարումն իրականացվում է ԱՄՆ դոլարով, անկանխիկ եղանակով: Արժեկտրոնի հաշվարկման օրվան և/կամ պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 18:00–ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Թողարկողը արժեկտրոնի վճարման/ պարտատոմսերի մարման կատարման օրը հանձնարարական է տալիս իր սպասարկող բանկին՝ համապատասխան վճարումները փոխանցելու Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածքում գործող բանկերում բացված բանկային հաշիվներին (այսուհետ՝ բանկային հաշիվ): Թողարկողը չի փոխանցում վճարումները այն

	սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում և Թողարկողը այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում Կազմակերպությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ:
Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում	Պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրում: Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են: Արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) նույնն են:
Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում	Տեղաբաշխումից հետո արժեթղթերի առուվաճառքը երկրորդային շուկայում կարող է իրականացվել բացառապես կարգավորվող շուկայում:
Ցուցակումը	Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով: Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

2.3.2. Առաջարկվող պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Կազմակերպության առաջարկվող պարտատոմսերի մարումների և Կազմակերպության կողմից ներգրավված այլ պարտավորությունների մարումների միջև ստորադասություն չկա: Այսինքն, Կազմակերպությունը չունի այնպիսի պարտավորություն, որի պարտատերերն ունեն մարման առաջնահերթություն այլ պարտատերերի, այդ թվում նաև առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի նկատմամբ: Կազմակերպության սնանկության դեպքում Կազմակերպության գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ: Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ՝ համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով

ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգի:

Առաջարկվող պարտատոմսերի դեպքում, սեփականատերերի պահանջները՝ կբավարարվեն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Կազմակերպության պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից պարտատոմսերից բխող պահանջները ենթակա չեն վերադասակարգման:

2.3.3. Տեղեկություններ պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքների վերաբերյալ

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

- ✓ ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը,
- ✓ իրականացնել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող ցանկացած գործառույթ,
- ✓ թողարկման օրվանից հաշված արժեկտրոնների վճարման պարբերականությամբ՝ համապատասխան արժեկտրոնների վճարման օրերին ստանալ արժեկտրոնային եկամուտը: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
- ✓ պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը): Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարման գումարի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
- ✓ Թողարկողի կողմից Պարտատոմսերի մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով դատական կարգով օգտվել պարտատիրոջ՝ օրենքով վերապահված իրավունքներից:
- ✓ օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:
- ✓ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք:
- ✓ Օրենքով և իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

Օրենքով և իրավական ակտերով սահմանված պարտատոմսերի սեփականատերերի իրավունքների սահմանափակումներ չկան:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՄԲ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում ունենալ սեփական (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև կատարել պարտատոմսերի ձեռքբերման կամ օտարման հետ

կապված պարտադիր վճարները՝ սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման նպատակով:

Կազմակերպության պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից՝ ուղղակիորեն կամ վերջինիս հաշվի օպերատորների միջոցով:

ՀՀ օրենսդրությամբ, Թողարկողի կանոնադրությամբ և Թողարկողի անվանական պարտատոմսերի թողարկման մասին վերջինիս խորհրդի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ սահմանված չեն:

2.3.4. **Իրավասու մարմնի որոշումը նոր թողարկման մասին**

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ անվանական պարտատոմսերը թողարկվելու են համաձայն Կազմակերպության Դիտորդ խորհրդի 2026թ. հուլիսի 20-ի «Ֆարմ Կրեդիտ Արմենիա ՈՒՎԿ ԱԿ պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին» որոշման, վերջինով սահմանվել է թողարկել և տեղաբաշխել մինչև 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր: Յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը և այլ էական պայմանները ենթակա են որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով: Միաժամանակ, սահմանվել է, որ տեղաբաշխումը պետք է իրականացվի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով:

Թողարկված պարտատոմսերի միջոցով ձեռք բերված միջոցները տեղաբաշխվելու են համաձայն Սոցիալական պարտատոմսերի հայեցակարգի, որն էլ իր հերթին գնահատվել է Fitch Ratings-ի կողմից ստանալով անկախ կողմի երկրորդ կարծիքի հավաստում: Սա թույլ կտա սույն ազդագրով թողարկված պարտատոմսերը որակել որպես սոցիալական պարտատոմսեր:

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ-ի կողմից առանձին տրանշերի գծով հնարավոր է նախատեսվեն պարտատոմսերի հետգնում և վաղաժամկետ մարում (թողարկողի կամ ներդրողի նախաձեռնությամբ (քոլ օպցիոն, փութ օպցիոն)), որոնց մանրամասները ենթակա են որոշման Թողարկման առանձին որոշումներով և պայմաններով տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Ազդագրի 2.7. բաժնում նախատեսված են ֆինանսական պայմաններ (կովենանտներ), որոնց խախտումը կհամարվի պարտավորությունների չկատարման դեպք, ինչի արդյունքում պարտատոմսերի սեփականատերերը կարող են ստանալ պարտատոմսերի վաղաժամկետ մարման պահանջ ներկայացնելու իրավունք: Վերոնշյալ ֆինանսական պայմանների (կովենանտներ) կիրառելիությունը ըստ յուրաքանչյուր տրանշի ենթակա է որոշման Ընկերության խորհրդի առանձին որոշումներով:

Հարկ է նշել, որ կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու հայտի՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ կողմից մերժման դեպքում, տեղաբաշխումը համարվելու է

չեղյալ, և պարտատոմսերի դիմաց վճարված, ինչպես նաև հաշվեգրված արժեկտորնների գումարները հետ են վերադարձվելու ներդրողներին:

2.3.5. Տեղաբաշխված (տեղաբաշխվող) պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը

Կարևոր ծանուցում

Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ իր կողմից թողարկվող պարտատոմսերում ներդրումներ կատարելիս ներդրողները արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման վերաբերյալ սույն բաժնում ներկայացված տեղեկատվությունը չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և հիմնվեն վերջինիս վրա, ուստի խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման կամ փոփոխության արդյունքում ներդրողների ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Պարտատոմսերից ստացված եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների.

- ✓ **Շահութահարկ** (Իրավաբանական անձանց դեպքում),
- ✓ **Եկամտային հարկ** (Ֆիզիկական անձանց դեպքում):

Պարտատոմսերից կարելի է եկամուտ ստանալ հետևյալ տեսքով.

1. Տոկոսային եկամուտ (պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը),
2. Կապիտալի հավելաճ (ձեռքբերման պահից հետո պարտատոմսի գնի աճը, հաշվարկվում է որպես մինչև մարման օրը պարտատոմսի վաճառքի և գնման գնի դրական տարբերություն):

Շահութահարկ

Շահութահարկ վճարողներ են համարվում ՀՀ գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Հարկվող շահույթը հարկատուի՝ ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Այս պահին շահութահարկի դրույքը 18 տոկոս է:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց շահութահարկի դրույքաչափը պարտատոմսերում ներդրումներից ստացված եկամտի համար կազմում է 10 տոկոս: Թողարկողի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025թ.-ի հունվարի 1-ից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված

(առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսների կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտներից ստացվող եկամուտների մասով ազատվում են շահութարկի վճարումից:

Եկամտային հարկ

Եկամտային հարկ վճարողներ են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Այս պահին եկամտային հարկի դրույքաչափը 10 տոկոս է: Թողարկողի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:

ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025թ.-ի հունվարի 1-ից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսների կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները ազատվում են եկամտային հարկից: Բացառություն են կազմում միայն բանկերի թողարկած այն պարտատոմսերը, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:

2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1. Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար

- Ազդագրի շրջանակում առաջարկը կարող է իրականացվել Ազդագրի հրապարակմանը հաջորդող 12 ամսվա ընթացքում՝ պայմանով, որ առկա է ՀՀ ԿԲ թույլտվությունը:
- Ազդագրի շրջանակում Կազմակերպությունը նախատեսում է թողարկել անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ մինչև 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր:
- Յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը և այլ էական պայմանները ենթակա են որոշման Ընկերության Խորհրդի առանձին որոշումներով:
- Թողարկվող դրամային պարտատոմսերի անվանական արժեքը կազմելու է 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ դոլարային պարտատոմսերինը՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար:
- Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման օրը/օրերը, կսահմանվեն Կազմակերպության Խորհրդի առանձին որոշումներով: Այդ մասին տեղեկատվությունը կհրապարակվի տեղաբաշխումից ոչ ուշ, քան 2 աշխատանքային օր առաջ Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ www.fca.am, www.araratbank.am:
- Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով՝ Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով: Ընդ

որում՝ տեղաբաշխման աճուրդին ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:

- Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին անմիջապես կարող են մասնակցել միայն Բորսայի անդամները, որոնց ցանկը հասանելի է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ պաշտոնական կայքում՝ www.amx.am: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները կարող են աճուրդին մասնակցել (օգտվել առաջարկից) Բորսայի անդամների միջոցով՝ վերջիններիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:
- Բորսայի տարբեր մասնակիցներ կարող են սահմանել աճուրդին մասնակցելու (առաջարկից օգտվելու) տարբեր գործընթացներ, պարտատոմսերի դիմաց վճարումներ կատարելու մեթոդներ և ժամկետներ, արժեթղթերը ստանալու մեթոդներ և ժամկետներ, արժեթղթերի վերաբերյալ քաղվածք ստանալու ձևեր, ներդրողների հայտերի բավարարման արդյունքների մասին իրազեկման կարգեր և ձևեր, ինչպես նաև սահմանել տարբեր սակագներ: Այդ իսկ պատճառով, Կազմակերպությունը չի կարող սպառիչ տեղեկություններ հրապարակել նշված հարցերի վերաբերյալ և հորդորում է Բորսայի անդամ չհանդիսացող պոտենցիալ ներդրողներին ուսումնասիրել Բորսայի անդամների կողմից առաջարկվող պայմանները իրենց համար լավագույն տարբերակ գտնելու համար:
- Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը, իսկ մի քանի օր լինելու դեպքում տեղաբաշխման սկզբի և ավարտի օրերը, Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցումից հետո յուրաքանչյուր տրանշի համար լրացուցիչ կսահմանվի «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Խորհրդի առանձին որոշումներով:
- Տեղաբաշխման օրվանից/տեղաբաշխումը մի քանի օր լինելու դեպքում՝ տեղաբաշխման սկզբից/ առնվազն 2 աշխատանքային օր առաջ Կազմակերպությունն այդ մասին տեղեկությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Կազմակերպությունը նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով:
- Գնորդները պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով գնման մրցակցային հայտեր են ներկայացնում տեղաբաշխման համակարգ՝ տեղաբաշխման օրվա/օրերի/ ժամը 11^{00}-ից մինչև 13^{30}-ը: Գնորդներն իրավունք ունեն հետ կանչել կամ փոփոխել իրենց կողմից ներկայացված հայտերը և նոր հայտեր մուտքագրել մինչև 13^{30}-ը: Տեղաբաշխողի կողմից աճուրդի անցկացումը, որի ընթացքում տեղի է ունենում արժեթղթերով առքուվաճառքի գործարքների կնքման գործընթացը, տևում է մինչև տեղաբաշխման օրվա ժամը 15^{00}-ն:
- Գնման մրցակցային հայտով գործարքները կնքվում են այն գներով, որոնք նշված են գնման հայտերում՝ ըստ գների նվազման հաջորդականության: Միևնույն գին ունեցող հայտերը բավարարվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:
- Կազմակերպության պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդն իրականացվելու է դրամական միջոցների և պարտատոմսերի նախնական դեպոնացմամբ՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված կարգով: Տեղաբաշխման ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակից գործարքներ կարող է կնքել նախապես

դեպոնացված դրամական միջոցների սահմաններում, իսկ տեղաբաշխողը՝ նախապես դեպոնացված արժեթղթերի սահմաններում: Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում գնորդները կարող են կատարել դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացումներ և ապադեպոնացումներ՝ Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի առևտրի կանոններով» և ըստ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված ընթացակարգերի:

- Որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակցի կողմից ներկայացված մրցակցային հայտերում նշված արժեթղթերի ընդհանուր քանակի համար սահմանափակում չկա: Գնորդը կարող է տեսնել միայն իր կողմից տեղաբաշխման համակարգ ներկայացված բոլոր գնման հայտերը:
- Տեղաբաշխման աճուրդը կարող է հետաձգվել, ընդմիջվել կամ դադարեցվել, աճուրդի ընթացքում տեխնիկական ընդմիջում կարող է հայտարարվել, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է չեղյալ համարվել Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ով և «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ով սահմանված ընթացակարգերով և դեպքերում:
- Տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացվում է գործարքի կնքման օրվա ընթացքում:
- Տեղաբաշխման ավարտից հետո Բորսան «Տեղեկատվության բացահայտման կանոններին» համապատասխան կազմակերպում է տեղաբաշխման արդյունքների հրապարակումն իր պաշտոնական կայքում:
- Թողարկողն իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.fca.am, տեղաբաշխման ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում է աճուրդի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ներկայացնելով առաջարկությունների ընդհանուր ծավալը, բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը, տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված գինը (եկամտաբերությունը) և այլն:
- Թողարկողի պարտատոմսերի դիմաց սեփականության իրավունքը հավաստող քաղվածքները տրամադրվում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հաշվի օպերատորներիի կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4.2. Պարտատոմսերի տեղաբաշխման պլանը

Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (այդ թվում որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին), անհատ ձեռնարկատերերին: Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 1 (մեկ) ժամվա ընթացքում Բորսայի իրավասու ստորաբաժանումը Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ին համապատասխան ձևակերպում է կնքված գործարքների գրանցման վկայականները և ուղարկում Բորսայի

համապատասխան անդամին: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց հայտերի բավարարման մասին տեղեկանում են Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:

2.4.3. Առաջարկի գինը

Տեղաբաշխման համակարգում գրանցվելուց հետո տեղաբաշխման մասնակիցները տեղաբաշխման նստաշրջանի բացման պահից տեղաբաշխման համակարգ են մուտքագրում պարտատոմսերի գնման հայտերը:

Պարտատոմսերի լրիվ գինը տեղաբաշխման առաջին օրվանից սկսած, հաշվարկվում է 2.3 կետում նշված բանաձևի հիման վրա: Ներդրողները աճուրդը կազմակերպողին ներկայացվող հայտում նշում են ձեռք բերվող պարտատոմսերի պահանջվող եկամտաբերությունը/գինը և պարտատոմսերի այն ծավալը, որը ներդրողը պատրաստ է ձեռք բերել հայտում ներկայացված եկամտաբերությամբ/գնով: Հայտերի բավարարման կտրման գնի վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի համար կներառվի պարտատոմսերի տեղաբաշխման վերաբերյալ հրապարակվող համապատասխան տրանշով թողարկվող պարտատոմսերի վերջնական պայմանների և հայտարարության մեջ:

Տեղաբաշխման աճուրդի ընթացքում պարտատոմսեր ձեռք բերելու համար պոտենցիալ ներդրողները կարող են դիմել Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպություններին և մասնակցել աճուրդին՝ վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Բորսայի անդամների ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում (www.amx.am):

Արժեթղթերի հաշիվները բացվում և սպասարկվում են ՀԿԴ հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկը հասանելի է ՀԿԴ պաշտոնական ինտերնետային կայքում (www.cda.am):

Բորսայի անդամ հանդիսացող ներդրողներից տեղաբաշխման աճուրդի ընթացքում ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվում են միջնորդավճարներ Բորսայի Սակագների մասին կանոններով սահմանված չափերով: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց կողմից ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվող միջնորդավճարների մասին կարող են տեղեկանալ Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին:

2.4.4. Տեղաբաշխումը

2.4.4.1. Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Ազդագրի հրապարակման պահին Թողարկողը որևէ տեղաբաշխողի հետ երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու վերաբերյալ կնքված պայմանագիր չունի: Սակայն, տեղաբաշխման առանձին թողարկումների համար Թողարկողը կարող է ներգրավել երաշխավորված տեղաբաշխում իրականացնողների: Այդ պարագայում, տեղաբաշխողներին

վերաբերող տեղեկատվությունը (այդ թվում՝ անվանումները, գտնվելու վայրերը, երաշխավորված ծավալը և այլն) ենթակա է ներկայացման Թողարկման վերջնական պայմաններով:

2.4.4.2. Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերը չերաշխավորված տեղաբաշխումն իրականացվելու է մասնագիտացված կազմակերպության՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից՝ համաձայն 03 օգոստոսի 2026թ. վերջիններիս միջև կնքված Համագործակցության պայմանագրի և դրա հիման վրա կնքված լրացուցիչ համաձայնագրի:

Տեղաբաշխողի՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք,85-րդ տարածք, գրանցման համարը՝ 4, հեռ.՝ +(374 10) 59 23 23, ֆաքս՝ +(374 10) 54 78 94, էլ. փոստ՝ info@araratbank.am, պաշտոնական ինտերնետային կայք՝ www.araratbank.am:

Պարտատոմսերի տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի դեպքում պարտատոմսերի տեղաբաշխման ձևը (երաշխավորված կամ չերաշխավորված), պարտատոմսերի ծավալը, քանակը, պարտատոմսերի տեղաբաշխման կարգը, Թողարկողի և Տեղաբաշխողի իրավունքներն ու պարտականությունները, Տեղաբաշխողին վճարման ենթակա գումարի չափն ու կարգը, Թողարկողի և Տեղաբաշխողի պատասխանատվությունը կսահմանվեն վերջիններիս միջև կնքվող լրացուցիչ համաձայնագրերով:

Տեղաբաշխման աճուրդի ընթացքում պարտատոմսեր ձեռք բերելու համար պոտենցիալ ներդրողները կարող են դիմել Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպություններին և մասնակցել աճուրդին՝ վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Բորսայի անդամների ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.amx.am: Տեղաբաշխումից հետո երկրորդային շուկայում պարտատոմսերի առքուվաճառքի գործարք կնքելու համար ներդրողները պետք է դիմեն կա՛մ ներդրումային ընկերություններին, կա՛մ բրոքերային ծառայություն մատուցող բանկերին:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձինք պետք է ունենան արժեթղթերի հաշիվներ, որոնք բացվում և սպասարկվում են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկը հասանելի է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ (www.cda.am):

Պարտատոմսեր ձեռք բերող անձը, նախքան ներդրում իրականացնելը, պարտավոր է նաև որևէ բանկում իր անվամբ բացել դրամային բանկային հաշիվ, և այդ հաշվի վերաբերյալ տվյալները ներկայացնել «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ին՝ պարտատոմսերում կատարված ներդրումների մարման և արժեկտրոնային եկամուտների ստացման համար:

2.4.4.3. Տեղաբաշխման պայմանները

Համաձայն Թողարկողի և Տեղաբաշխողի միջև կնքված համագործակցության պայմանագրի և Չերաշխավորված եղանակով արժեթղթերի տեղաբաշխման մասին համաձայնագրի՝ Թողարկողը պարտավորվել է Տեղաբաշխողին վճարել՝ տեղաբաշխման փաթեթի պատրաստման և ազդագրի կազմման վճար՝ 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ միանվագ (առանց ավելացված

արժեքի հարկի), իսկ Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտից հետո Թողարկողը Տեղաբաշխողին է վճարում Արժեթղթերի տեղաբաշխման ծառայությունների վճար փաստացի տեղաբաշխված արժեթղթերի անվանական ծավալի 0.4%-ի չափով (առանց ավելացված արժեքի հարկի):

2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը սահմանված կարգով դիմում է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով: Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթ արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրելու նպատակով Թողարկողը տասը աշխատանքային օրվա ընթացքում դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ: Հարկ է նշել, որ որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրման հայտը հնարավոր է չբավարարվի: Պարտատոմսերի թողարկմանը հաջորդող 12 ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Թողարկողի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ արժեկտրոնի հաշվեգրված գումարները:

Կազմակերպությունը պարտատոմսի թողարկումներն իրականացնում է՝ ցանկացած պահի դրությամբ պահպանելով ՀՀ ԿԲ «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 6-րդ կետի պահանջները:

2.6. Լրացուցիչ տեղեկատվություն

Սույն Բաժնում ներկայացված տեղեկատվության հավաքագրման և մշակման համար որպես խորհրդատու հանդես է եկել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն: Ներկայացված տեղեկատվությունն անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

2025 թվականին կազմակերպությունը իտալական վարկանշավորող MFR ընկերության կողմից ստացել է Հաճախորդների պաշտպանության սերտիֆիկացում Ոսկե մակարդակ (CPC Gold level certificate), որը տրամադրվում է 3 տարի վավերականության ժամկետով: Վերջինս վկայում է Ֆարմ Կրեդիտ-ի պատասխանատու վարկավորման, թափանցիկ գնագոյացման, արդար վերաբերմունքի և հաճախորդների պաշտպանության գործելակերպի մասին: Նույն ժամանակ

կազմակերպությունը ստացել է նաև sBB+ սոցիալական և բնապահպանական վարկանիշ (2025): Հաստատում է սոցիալական պատասխանատվության և բնապահպանական ռիսկերի կառավարման ամուր պրակտիկան՝ համաձայն սոցիալական կատարողականի կառավարման համընդհանուր ստանդարտների (SPTF/CERISE):

Կազմակերպության կողմից սույն ազդագրով տեղաբաշխվող պարտատոմսերը Fitch Ratings-ի կողմից ստացել է Սոցիալական պարտատոմսեր թողարկելու Երկրորդ կողմի եզրակացություն (անկախ): Վերջինս հրապարակված է Թողարկողի կայքի Պարտատոմսեր բաժնում:

Կազմակերպությանը վարկանշող կազմակերպությունների կողմից որևէ վարկանիշ չի շնորհվել:

2.7. Պարտատոմսերի լրացուցիչ պայմաններ

1. Խաչաձև դեֆոլտ (Cross-Default)

Խաչաձև դեֆոլտ է համարվում հետևյալ դեպքերից որևէ մեկի կամ մի քանիսի առաջացումը՝

(ա) Թողարկողի՝ փոխառված կամ այլ կերպ ներգրավված դրամական միջոցների գծով կամ դրանց առնչությամբ ցանկացած առկա կամ ապագա պայմանագրային պարտավորության մասով, պարտավորությունների չկատարման ցանկացած փաստացի կամ հնարավոր դեպքի (դեֆոլտի) կամ նմանատիպ այլ հանգամանքի (անկախ դրա անվանումից) դեպքում, պարտատերը (պարտատերերը) իրավունք է (են) ձեռք բերում պահանջելու այդ պարտավորության վաղաժամկետ մարումը՝ մինչև դրա համար սահմանված մարման ժամկետի լրանալը, կամ

(բ) նշված ցանկացած պարտավորություն չի մարվում սահմանված ժամկետում կամ, կախված հանգամանքներից, սկզբնապես կիրառելի արտոնյալ ժամկետի ընթացքում, կամ

(գ) Թողարկողը սահմանված ժամկետում կամ, կախված հանգամանքներից, սկզբնապես կիրառելի արտոնյալ ժամկետի ընթացքում չի վճարում որևէ գումար, որը վճարման ենթակա է իր կողմից փոխառված կամ այլ կերպ ներգրավված դրամական միջոցների գծով կամ դրանց առնչությամբ ցանկացած պարտավորության ապահովման նպատակով տրամադրված ցանկացած առկա կամ ապագա երաշխիքով, երաշխավորությամբ կամ փոխհատուցման պարտավորությամբ,

պայմանով, որ համապատասխան պարտավորությունների և/կամ նշված երաշխիքով, երաշխավորությամբ կամ փոխհատուցման պարտավորությամբ վճարման ենթակա գումարների ընդհանուր չափը, որոնց առնչությամբ տեղի է ունեցել վերոնշյալ դեպքերից մեկը կամ մի քանիսը, հավասար է կամ գերազանցում է 50,000 (հիսուն հազար) եվրոն (կամ դրա համարժեքն այլ արժույթով):

2. **Ակտիվները չծանրաբեռնելու պարտավորություն** (Negative Pledge)

Ապահովման միջոցների սահմանափակում

Եթե Թողարկողը չի ստացել շրջանառության մեջ գտնվող Պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի առնվազն 50%-ին տիրապետող Պարտատոմսերի սեփականատերերի նախնական գրավոր համաձայնությունը, Թողարկողն իրավունք չունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստեղծել, առաջացնել, ստանձնել կամ թույլ տալ ցանկացած տեսակի Գրավային իրավունքի առկայությունը իր ցանկացած առկա կամ ապագա գույքի, եկամուտների կամ այլ ակտիվների նկատմամբ, պայմանով, սակայն, որ Թողարկողը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստեղծել, առաջացնել, ստանձնել կամ թույլ տալ ցանկացած Թույլատրելի գրավային իրավունքի կամ Գոյություն ունեցող գրավային իրավունքի առկայությունը:

«Գրավային իրավունք» նշանակում է ցանկացած տեսակի հիփոթեք, գրավ, գրավային ծանրաբեռնում (charge), արտոնություն, առաջնահերթության իրավունք, գրավադրում (hypothecation), ծանրաբեռնում, իրավունքի (պահանջի) զիջում, պահման իրավունք (lien), արգելանք, հաշվանցում կամ ցանկացած այլ ապահովման իրավունք, կամ ցանկացած այլ պայմանագիր կամ պայմանավորվածություն, որի արդյունքում ապահովում է տրամադրվում ցանկացած առկա կամ ապագա ակտիվների, եկամուտների կամ իրավունքների վրա կամ դրանց առնչությամբ, կամ դրանց ցանկացած առանձնացում կամ դրանց նկատմամբ ցանկացած այլ արտոնյալ պայմանավորվածություն, ներառյալ ցանկացած ապահովագրական պայմանագրով (պոլիսով) վնասի հատուցում ստացողների կամ շահառուների ցանկացած նշանակում կամ ցանկացած նմանատիպ պայմանավորվածություն:

«Թույլատրելի գրավային իրավունք» նշանակում է՝

(ա) Հարկի գծով ցանկացած Գրավային իրավունք կամ օրենքի ուժով ծագող ցանկացած այլ ոչ պայմանագրային Գրավային իրավունք, կամ սովորական գործունեության ընթացքում ծագող՝ օրենքով նախատեսված ցանկացած այլ Գրավային իրավունք, պայմանով, որ այդ Գրավային իրավունքը (բացառությամբ այնպիսի գումարի համար Գրավային իրավունքի, որը դեռ ժամկետանց չէ) դադարեցվում է դրա ծագման օրվանից հետո 30 օրվա ընթացքում, կամ, եթե այդ Գրավային իրավունքի վավերականությունը կամ չափը կամ դրանով ապահովված գումարը վիճարկվում է բարեխղճորեն և պատշաճ ընթացակարգով, և այդ գումարի վճարման համար ձևավորվել են համարժեք պահուստներ, ապա վերջնական դատական ակտի կայացումից հետո 30 օրվա ընթացքում, կամ

(բ) Թողարկողի սովորական գործունեության ընթացքում ծագող և Թողարկողի պարտավորություններն ապահովող ցանկացած Գրավային իրավունք, եթե այդ պարտավորությունները՝ Թողարկողի ցանկացած առկա կամ ապագա գույքի, եկամուտների կամ այլ ակտիվների նկատմամբ որևէ Գրավային իրավունքով ապահովված մյուս բոլոր

պարտավորությունների հետ միասին, որևէ պահի չեն գերազանցում Թողարկողի ընդհանուր ակտիվների 50%-ը՝ որոշված Թողարկողի վերջին ավարտված ֆինանսական եռամսյակի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

«Գոյություն ունեցող գրավային իրավունք» նշանակում է Թողարկման օրվա դրությամբ Թողարկողի ցանկացած գույքի, եկամուտների կամ այլ ակտիվների նկատմամբ գոյություն ունեցող ցանկացած Գրավային իրավունք:

3. Վերահսկիչ փաթեթի փոփոխություն՝ պարտադիր հետգնում

Եթե մինչև Պարտատոմսերի ամբողջական մարումը տեղի է ունենում փայատերերի վերահսկիչ փաթեթի փոփոխություն, Թողարկողը պարտավոր է այդ փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկություն հրապարակել իր ինտերնետային կայքում և գրավոր ծանուցել Պարտատոմսի սեփականատերերին:

Պարտատոմսի սեփականատերերը իրավունք ունեն Թողարկողի կայքում, Բաժնետերեր մասում, վերահսկող փաթեթի փոփոխության հանգեցնող բաժնետրական փոփոխության մասին տեղեկության հրապարակումից /ծանուցումից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում/ հետո, գրավոր պահանջել Թողարկողից ամբողջությամբ կամ մասնակիորեն հետ գնել իրեն պատկանող Պարտատոմսերը՝ դրանց անվանական արժեքով՝ գումարած հաշվեգրված, սակայն չվճարված տոկոսները:

Թողարկողը պարտավոր է Պարտատոմսերի հետգնման գինը փոխանցել Պարտատոմսերի հետգնում պահանջած յուրաքանչյուր Պարտատոմսի սեփականատիրոջը հետգնման պահանջի ներկայացման օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն նպատակներով **«Վերահսկիչ փաթեթի փոփոխություն»** նշանակում է՝

(ա) ցանկացած անձ կամ համատեղ կամ բացահայտ կամ ենթադրյալ համաձայնության կամ փոխըմբռնման հիման վրա գործող անձանց խումբ, բացառությամբ Փայատերերի, ուղղակիորեն կամ մեկ կամ մի քանի միջնորդների միջոցով ուղղակի կամ անուղղակի ձեռք է բերում Թողարկողի կանոնադրական կապիտալում տնտեսական կամ քվեարկության իրավունք տվող ցանկացած մասնակցության առնվազն 10%-ը,

(բ) ցանկացած անձ կամ համատեղ կամ բացահայտ կամ ենթադրյալ համաձայնության կամ փոխըմբռնման հիման վրա գործող անձանց խումբ, բացառությամբ Փայատերերի (իսկ Փայատերերի առնչությամբ՝ Փայատերերի իրական շահառուների), ուղղակիորեն կամ մեկ կամ մի քանի միջնորդների միջոցով ձեռք է բերում Թողարկողի և/կամ Դիտորդ խորհրդի անդամների մեծամասնությունն ընտրելու և/կամ կոլեգիալ կամ միանձնյա գործադիր մարմինը նշանակելու իրավասություն (անկախ այդ իրավասության փաստացի իրականացումից),

(գ) փոխարինվում է Թողարկողի կամ, կախված հանգամանքներից, Դիտորդ խորհրդի և/կամ կոլեգիալ գործադիր մարմնի կազմը որևէ պահի ձևավորող անդամների

մեծամասնությունը,

(դ) Թողարկողին կամ Փայատերերին վերաբերող ցանկացած վարկային կամ արտոնյալ բաժնետոմսերի փաստաթղթերով տեղի է ունենում «Վերահսկիչ փաթեթի փոփոխություն» (անկախ դրա անվանումից) կամ նմանատիպ դեպք, կամ

(ե) վաճառվում են Թողարկողի բոլոր կամ գրեթե բոլոր ակտիվները:

«Փայատերեր» նշանակում է Թողարկման օրվա դրությամբ Թողարկողի փայատեր հանդիսացող ցանկացած անձ:

4. Պարտավորությունների չկատարման դեպքեր

4.1. Պարտավորությունների չկատարման դեպքեր

Ստորև նշված դեպքերից յուրաքանչյուրը համարվում է Պարտավորությունների չկատարման դեպք՝

(ա) **Չվճարում:** Թողարկողը սահմանված ժամկետում չի վճարում որևէ Պարտատոմսի գծով վճարման ենթակա տոկոսների (արժեկտրոնի) կամ անվանական արժեքի որևէ մասը, բացառությամբ այն դեպքում, երբ չվճարումը պայմանավորված է վարչական կամ տեխնիկական սխալով, և այդ չվճարումը շարունակվում է 3 (երեք) աշխատանքային օր:

(բ) **Այլ պարտավորությունների խախտում:** Թողարկողը չի կատարում կամ չի պահպանում սույն Ծրագրային ազդագրով և/կամ Պարտատոմսերի առնչությամբ իր այլ պարտավորություններից որևէ մեկը կամ մի քանիսը:

(գ) **Անվճարունակություն:** Թողարկողն ընդհանուր առմամբ դադարեցնում է կամ հայտարարում է դադարեցնելու մտադրության մասին իր պարտքերի (կամ դրանց որևէ տեսակի) վճարումը, կամ ի վիճակի չէ կամ ընդունում է, որ ի վիճակի չէ վճարել իր պարտքերը (կամ դրանց որևէ տեսակը) դրանց վճարման ժամկետը վրա հասնելիս, կամ համարվում է իր պարտքերը վճարելու անկարող՝ յուրաքանչյուր դեպքում որևէ Կիրառելի օրենսդրության համաձայն կամ դրա նպատակներով, կամ իրավասու դատարանի կողմից ճանաչվում է սնանկ կամ անվճարունակ:

(դ) **Մորատորիում:** (1) Թողարկողի նկատմամբ հարուցվում է վարույթ՝ լուծարման, անվճարունակության (սնանկության), պարտատերերի հետ համաձայնության, վերակազմակերպման կամ նմանատիպ այլ հարաբերությունները կարգավորող որևէ կիրառելի օրենսդրության համաձայն, կամ դիմում է ներկայացվում (կամ դատարան են ներկայացվում փաստաթղթեր) վարչական կամ այլ կառավարչի, ժամանակավոր կառավարչի կամ նմանատիպ այլ պաշտոնատար անձի նշանակման համար, կամ Թողարկողի կամ նրա բիզնեսի կամ գործունեության ամբողջության կամ որևէ մասի նկատմամբ նշանակվում է կառավարիչ կամ լուծարող, կամ (2) Թողարկողը ձեռնարկում է որևէ գործողություն իր որևէ պարտավորության պայմանների վերանայման կամ կատարման հետաձգման նպատակով, կամ իրականացնում է ընդհանուր զիջում իր

պարտատերերի օգտին, կամ իր պարտատերերի հետ կամ նրանց օգտին կնքում է համաձայնություն կամ հաշտության համաձայնություն, կամ հայտարարում է մորատորիում՝ յուրաքանչյուր դեպքում իր ֆինանսական պարտավորությունների ամբողջության կամ դրանց էական մասի առնչությամբ:

(ե) **Լուծարում:** Իրավասու դատարանը կայացնում է որոշում կամ ընդունվում է ուժի մեջ մտած որոշում Թողարկողի լուծարման կամ գործունեության դադարման վերաբերյալ, կամ Թողարկողը դադարեցնում է կամ սպառնում է դադարեցնել իր բիզնեսի կամ գործունեության ամբողջությունը կամ էական մասը:

(զ) **Էական բացասական ազդեցություն:** Տեղի է ունենում որևէ դեպք, որն ունի կամ ողջամտորեն կարող է ունենալ Էական բացասական ազդեցություն Թողարկողի գործունեության վրա:

(է) **Դատական ակտերի չկատարում:** Թողարկողը չի կատարում օրինական ուժի մեջ մտած և բողոքարկման ոչ ենթակա դատական ակտը կամ արբիտրաժային վճիռը, որը բացասական ազդեցություն կունենա Թողարկողի վրա և/կամ որի ընդհանուր գումարը կազմում է 50,000 (հիսուն հազար) եվրո կամ ավելի:

(ը) **Հարկադիր օտարում, ազգայնացում և այլն:** Որևէ իրավասու մարմին հարկադիր օտարում, ազգայնացնում, բռնագանձում կամ այլ կերպ սեփականազրկում է Թողարկողի գույքի կամ այլ ակտիվների կամ նրա կանոնադրական կապիտալի ամբողջությունը կամ էական մասը, կամ ստանձնում է այդ գույքի կամ այլ ակտիվների, Թողարկողի բիզնեսի կամ գործունեության կամ նրա փայային կանոնադրական կապիտալի պահպանությունը կամ վերահսկողությունը, կամ ձեռնարկում է որևէ գործողություն, որը կխոչընդոտի Թողարկողին կամ նրա պաշտոնատար անձանց իրականացնել նրա բիզնեսի կամ գործունեության ամբողջությունը կամ էական մասը՝ յուրաքանչյուր դեպքում, երբ ազդեցության ենթարկված համապատասխան գույքի կամ այլ ակտիվների ընդհանուր արժեքը գերազանցում է Թողարկողի ընդհանուր ակտիվների 10%-ը:

(թ) **Առևտրին թույլտվություն:** Կարգավորվող շուկայում Պարտատոմսերն առևտրին թույլատրելու դիմումը մերժվում է, կամ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում Պարտատոմսերի առևտրին թույլտվությունը կասեցվում է, հետ է կանչվում, դադարեցվում է կամ այլ կերպ կորցնում է իր ուժը:

(ժ) **Խաչաձև դեֆոլտ:** Տեղի է ունենում սույն փաստաթղթում Խաչաձև դեֆոլտով նախատեսված դեպքերից որևէ մեկը կամ մի քանիսը:

4.2. Պարտավորությունների չկատարման դեպքերի հետևանքները

(ա) Եթե տեղի է ունենում 4.1 ենթաբաժնի (ա) կետով նախատեսված՝ չվճարման հետ կապված Պարտավորությունների չկատարման դեպք, յուրաքանչյուր Պարտատոմսի սեփականատեր իրավունք ունի Թողարկողին ուղղված գրավոր ծանուցմամբ իրեն պատկանող Պարտատոմսերն ամբողջությամբ կամ մասնակիորեն հայտարարել անհապաղ մարման

ենթակա, որից հետո դրանք դառնում են անհապաղ մարման ենթակա՝ իրենց անվանական արժեքով՝ հաշվեգրված, սակայն չվճարված տոկոսների (արժեկտրոնի) հետ միասին, առանց որևէ լրացուցիչ գործողության կամ ձևականության:

(բ) Եթե տեղի է ունենում Պարտավորությունների չկատարման դեպք, բացառությամբ 4.1 ենթաբաժնի (ա) կետով նախատեսված՝ չվճարման հետ կապված Պարտավորությունների չկատարման դեպքի, Թողարկողը պարտավոր է այդ դեպքի առաջացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկություն հրապարակել իր ինտերնետային կայքում և գրավոր ծանուցել Պարտատոմսի սեփականատերերին, որից հետո՝ Թողարկողի ինտերնետային կայքում Պարտավորությունների չկատարման դեպքի մասին տեղեկության հրապարակումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում, Պարտատոմսերի սեփականատերերը (համատեղ կամ առանձին) կարող են Թողարկողին ուղղված գրավոր ծանուցմամբ իրենց պատկանող Պարտատոմսերն ամբողջությամբ կամ մասնակիորեն հայտարարել մարման ենթակա:

(գ) Երբ որոշակի սերիայի Պարտատոմսերի որևէ մաս ենթակա է հետգնման և մարման, դրանց վճարման ենթակա ընդհանուր անվանական արժեքը և հաշվեգրված, սակայն չվճարված տոկոսները (արժեկտրոնը) (ինչպես սահմանված է 6-րդ բաժնում (Վաղաժամկետ հետգնում և մարում)) դառնում են վճարման ենթակա՝ առանց դրանք վճարման ներկայացնելու, վճարման պահանջ, առարկություն կամ լրացուցիչ ծանուցում ներկայացնելու:

Սույն նպատակներով **«Էական բացասական ազդեցություն»** նշանակում է էական բացասական ազդեցություն՝

(ա) Թողարկողի, կամ դրա որևէ ակտիվի կամ գույքի վրա,

(բ) Թողարկողի բիզնեսի, հեռանկարների կամ ֆինանսական կամ բնապահպանական և սոցիալական վիճակի վրա,

(գ) Թողարկողի կամ գործունեության իրականացման վրա (ներառյալ, կասկածներից խուսափելու համար, Թողարկողի գործունեության լիցենզիայի կամ կարգավորող մարմնի այլ էական թույլտվության կասեցումը կամ ուժը կորցրած ճանաչելը), կամ

(դ) սույն Ծրագրային ազդագրով նախատեսված իր պարտավորությունները կատարելու Թողարկողի կարողության վրա:

5. Ֆինանսական պայմաններ (կովենանտներ)

Քանի դեռ Պարտատոմսերից որևէ մեկը գտնվում է շրջանառության մեջ, և եթե Պարտատոմսերի սեփականատերերը սույն Ծրագրային ազդագրով սահմանված կարգով այլ բան չեն հաստատել, Թողարկողը պարտավոր է մշտապես՝

(ա) **Կապիտալի համարժեքության նորմատիվ –** պահպանել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված և ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան հաշվարկված կապիտալի համարժեքության կարգավորիչ նորմատիվը՝ ոչ պակաս, քան 15%:

(բ) **Չծածկված վարկային ռիսկի գործակից** – պահպանել Չծածկված վարկային ռիսկի գործակիցը՝ ոչ ավելի, քան 15%, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝
(Փուլ 3-ի վարկեր + Փուլ 2-ի վարկեր – Վարկային կորուստների ընդհանուր պահուստներ) / ՖՀՄՄ-ի համաձայն ընդհանուր կապիտալ:
Նշված եզրույթներն ունեն ՖՀՄՄ-ով դրանց տրված նշանակությունները:

(գ) **Իրացվելի ակտիվների և Կարճաժամկետ պարտավորությունների հարաբերակցություն** – պահպանել Իրացվելի ակտիվների և Կարճաժամկետ պարտավորությունների հարաբերակցությունը՝ ոչ պակաս, քան 100%:

Սույն նպատակներով՝

«Իրացվելի ակտիվներ» նշանակում է Թողարկողի դրամական միջոցների, թղթակցային հաշիվների և մինչև 90 օր մարման ժամկետ ունեցող ակտիվների հանրագումարը, ներառյալ մինչև 90 օր մարման ժամկետ ունեցող վարկերի գծով մուտքերի 80%-ին հավասար գումարը, սակայն բացառությամբ ցանկացած ծանրաբեռնված իրացվելի ակտիվի:

«Կարճաժամկետ պարտավորություններ» նշանակում է հաջորդ 90 օրվա ընթացքում Թողարկողի ակնկալվող իրացվելիության արտահոսքերը, ներառյալ պարտատերերին կատարվելիք մարումները և այլ դրամական արտահոսքերը:

Նշված եզրույթներն ունեն ՖՀՄՄ-ով դրանց տրված նշանակությունները:

6. Վաղաժամկետ հետգնում և մարում

Այն դեպքում, երբ որևէ Պարտատոմս սույն Ծրագրային ազդագրի պայմանների համաձայն ենթակա է վաղաժամկետ հետգնման և մարման Պարտատոմսի սեփականատիրոջ նախաձեռնությամբ, ներառյալ Վերահսկիչ փաթեթի փոփոխությունից կամ Պարտավորությունների չկատարման դեպքից հետո, Թողարկողը յուրաքանչյուր այդպիսի Պարտատոմսի դիմաց վճարում է դրա անվանական արժեքին հավասար գումար՝ այդ Պարտատոմսի գծով հաշվեգրված, սակայն չվճարված տոկոսների (արժեկտրոնի) հետ միասին, որոնք հաշվարկվում են Ծրագրային ազդագրի 2.3.1 ենթաբաժնում (Սոցիալական պարտատոմսերի պայմանները) սահմանված արժեկտրոնի կուտակման բանաձևին համապատասխան՝ մինչև վճարման օրը (այդ օրը չներառելով): Որևէ հավելավճար, զեղչ կամ այլ ճշգրտում չի կիրառվում:

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Անկախ աուդիտորները

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր տարի իր ֆինանսական հաշվետվություններն աուդիտի ենթարկելու նպատակով հրավիրում է արտաքին աուդիտ: Աուդիտորական կազմակերպությանն ընտրությունն իրականացվում է մրցույթի հայտարարման միջոցով, ինչի արդյունքում էլ նկատելի հանգամանք է վերջինիս փոփոխությունը:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին:

Կազմակերության 2024-2025թթ. Ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է **«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ**-ն, որի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0015, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 9-րդ շենք («Երևան Պլազա» բիզնես-կենտրոնի շենքում), հեռ. (+374)10 500 964, ինտերնետային կայք՝ www.grantthornton.am, կազմակերպության տնօրեն՝ Արմեն Հովհաննիսյան: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեշնլի» անդամ:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի՝ 2024-2025թթ. եզրակացությունները ներկայացված են Ազդագրին կից Հավելվածներում:

Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Կազմակերպության աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

3.2. Ռիսկային գործոններ

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների, պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ:

Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ռիսկային գործոններից յուրաքանչյուրը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործառնությունների, ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա:

Ելնելով նշվածից՝ Թողարկողը ձեռնպահ է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար: Մասնավորապես կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ռիսկերը.

Վարկային ռիսկ: Կազմակերպության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված գործընկերոջ վարկունակության, վարկառուի կողմից պարտավորության չկատարելու կամ մասնակի կատարելու հետ, որոնք կարող են հանգեցնել Կազմակերպության շահույթի և/կամ

կապիտալի նվազմանը: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ և ներդրումային գործունեության (պարտքային արժեթղթեր) հետ:

Վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Թողարկողը կարևորում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, հսկողություն սահմանում, սահմանաչափեր կիրառում տարբեր տեսակի կենտրոնացումների վրա, ինչպես օրինակ, տնտեսության ճյուղերի, վարկատեսակների, արժույթների, առանձին փոխառուների և նրանց հետ փոխկապակցված խմբերի նկատմամբ: Վարկավորելիս որպես ապահովվածություն նախապատվություն է տալիս վարկառուի վարկունակությանը և վճարունակությանը:

ՖՀՄՄ համաձայն հաշվարկված վարկերի և լիզինգի հաշվեկշռային պորտֆելը 30.06.2026թ-ի դրությամբ կազմում է 17.9 մլրդ ՀՀ դրամ, որի կազմում 90 օր և ավել ժամկետանցություն ունեցող վարկերի կշիռը կազմում է 0.1%: Կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշների գծով Կազմակերպությունը գտնվում է նվազագույն սահմանաչափից բարձր դիրքերում՝ 30.06.2026թ-ի դրությամբ Ընդհանուր կապիտալ/ՌԿԱ հարաբերակցությունը՝ 18.9%:

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը կապված է Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ՝ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը բնական է ֆինանսական կազմակերպությունների համար՝ Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնասներ կրելու ռիսկը:

Կազմակերպության իրացվելիությունը գտնվում է տնօրինության ուշադրության կենտրոնում, մասնավորապես՝ Կազմակերպությունում գործում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողով, որը վերահսկում է Կազմակերպության իրացվելիության ռիսկերը ժամկետայնության վերլուծության միջոցով, իրացվելիության սահմանաչափերի և գործակիցների պահպանման և վաղ զգուշացման ցուցիչների վերահսկողության միջոցով:

Կազմակերպության իրացվելության աղբյուրները դիվերսիֆիկացված են և իրենց մեջ ներառում են դրամական միջոցների կարճաժամկետ ներգրավումներ ՀՀ բանկերից, այդ թվում դրամական շուկայի գործիքների միջոցով (ռեպո, սվոփ): Կազմակերպությունը իր իրացվելության գործիքակազմում ունի նաև վերականգնվող վարկային գծեր, որոնք ոչ միայն հանդիսանում են իրացվելության ստացման արագ աղբյուր, այլև հնարավորություն են տալիս ավելի արդյունավետ և առավել քիչ ծախսերով կառավարել ընթացիկ իրացվելությունը:

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» Ունիվերսալ վարկային կազմակերպության իրացվելիության ռիսկը գտնվում է ընդունելի մակարդակում: Ստորև ներկայացվում են իրացվելիության հիմնական նորմատիվների մասով Ընկերության ցուցանիշները 30.06.2026թ-ի դրությամբ.

Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն	7.01 %
Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն	218.38 %

Տոկոսադրույքի ռիսկ: Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում, որն էլ իր հերթին կարող է ազդել Կազմակերպության զուտ շահույթի վրա: Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը կարող է ազդել Կազմակերպության ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև այն նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Կազմակերպությունը կառավարում է իրական արժեքով տոկոսադրույքի ռիսկը՝ պարբերաբար գնահատելով պոտենցիալ կորուստները, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից: Կազմակերպության ղեկավարությունն իրականացնում է Կազմակերպության ընթացիկ ֆինանսական գործունեության մոնիթորինգ, գնահատում է Կազմակերպության իրական արժեքով տոկոսադրույքի փոփոխությունների զգայունությունը և դրա ազդեցությունը Կազմակերպության շահութաբերության վրա:

Կազմակերպության ռիսկերի կառավարման սկզբունքներից ելնելով սահմանափակվում են տոկոսադրույքի հանդեպ զգայուն ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ ճեղքվածքի մեծությունը, արժեթղթերի պորտֆելի մեծությունը, կենտրոնացվածությունը և ժամկետայնությունը:

30.06.2026թ. և 31.12.2025թ. դրությամբ Կազմակերպությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժութային ռիսկ: Արտարժութային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից:

Ստորև ներկայացվում է արտարժութային դիրքերը 30.06.2026թ-ի դրությամբ.

Արժույթ	Արտարժութային դիրք
USD	41.7 %
EUR	0%
RUB	0%
Այլ	0%

Գործընկերոջ ռիսկ: Գործընկերոջ ռիսկի սահմանաչափն իրենից ներկայացնում է մեկ ֆինանսական հաստատության գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող է կրել: Կազմակերպությունը գործընկերոջ ռիսկը կառավարում է Կազմակերպության Ռիսկերի կառավարման քաղաքականության համաձայն՝ սահմանափակելով Կազմակերպության ռիսկը մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի նկատմամբ: Սահմանաչափերի ցանկացած փոփոխություն հաստատվում է Կազմակերպության Խորհրդի կողմից:
Կազմակերպությունը ձգտում է նվազեցնել գործընկերոջ ռիսկը՝

- սահմանափակելով գործընկերների ցանկը կառավարելի քանակով,
- կիրառելով գործընկերների հաստատման հիմնավոր գործընթաց մինչև ցանկացած նոր գործընկերոջ հետ որևէ գործառնության կնքումը,
- սահմանափակելով Կազմակերպության ռիսկը մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի նկատմամբ:

Կախված ռիսկի ծագման աղբյուրից՝ միջբանկային գործընկերոջ ռիսկը կարելի է տրոհել ռիսկերի հետևյալ տեսակների.
Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Վարկային կազմակերպության գործունեությունը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է, որի նպատակն է ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն էլ իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և վարկային կազմակերպությունների ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Այստեղ հնարավոր են փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Կազմակերպության գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:
Կազմակերպությունը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում:
Առաջին վճարողի ռիսկ և վճարման ռիսկ: Հաճախ իմաստ ունի տարանջատել այս երկու կատեգորիաները, քանի որ որոշ գործառնությունների գծով գործընկերոջ ռիսկը տարբեր է գործարքի կյանքի ընթացքում: Այն գործարքների դեպքում, երբ կողմերից երկուսն էլ փոխանակում են դրամական հոսքեր, ռիսկն ավելի բարձր է գործարքով նախատեսվող վճարումների իրականացման օրը (երբ Ընկերությունն իրականացնում է վճարումն առանց ստանալու հաստատումը, որ գործընկերոջ հանդիպակաց վճարումը հաշվեգրված է), քան վճարումների օրվան նախորդող ժամանակաշրջանում, երբ Ընկերությունը հնարավորություն ունի զերծ մնալ իր վճարումների կատարումից, եթե ակնհայտ է, որ գործընկերը չի կատարելու իր վճարումը:
Կլիմայական ռիսկ: Բնական աղետները՝ ջրհեղեղ, կայծակ և հրդեհ, պտտահողմ, ինչպես նաև կլիմայով պայմանավորված երևույթները՝ երաշտը, ցրտահարությունը, կարկտահարությունը գյուղատնտեսության բնագավառին բնորոշ հիմնական ռիսկերից են:
2019թ.-ից ՀՀ-ում մեկնարկել է գյուղատնտեսության ապահովագրության ծրագիրը, որը թև մասամբ, բայց բավականին մեծ ծածկույթով փակում է որոշակի մշակաբույսերի մշակման հետ կապված կլիմայական ռիսկերը: Ֆարմ Կրեդիտը աշխատում է ֆերմերային տնտեսությունների

հետ, որպեսզի վերջիններս համապատասխան գործունեություն ծավալելու դեպքում ձեռք բերեն ապահովագրական պոլիսներ:

Կազմակերպության վարկային պորտֆելի ավելի քան 65 տոկոսը տեղաբաշխված է Արարատյան դաշտավայրում, որտեղ ձևավորված է հակակարկտային կայանների ցանց, այդ թվում՝ անհատ ֆերմերների կողմից: Տեղաբաշխած պորտֆելի ավելի քան 70 տոկոսը ուղղված է գյուղատնտեսության ֆինանսավորմանը, ինչը ենթադրում է ինչպես առաջնային կարիքների համար վարկերի տրամադրումը, այնպես էլ ենթակառուցվածքների զարգացման ֆինանսավորումը վարկերի և լիզինգի միջոցով: Զգալի ավելացել են ֆերմերային տնտեսությունների քանակը, որոնք կիրառում են ժամանակակից կաթիլային ոռոգման համակարգեր, կարկտապաշտպան ցանցեր, կուտակիչ ջրամբարներ:

Հարկ է նշել, որ 18 տարիների ընթացքում պարբերաբար ստեղծվել են իրավիճակներ, երբ բնակլիմայական աղետների պատճառով մեր կողմից ֆինանսավորված տնտեսությունները կրել են վնասներ: Սակայն կազմակերպության վարկավորման ճիշտ քաղաքականության և նաև տուժած տնտեսությունների հետ անհատական մոտեցմամբ աշխատելու արդյունքում, կարող ենք փաստել, որ վնասներ գրեթե չենք կրել:

Արտադրանքի իրացվելիության ռիսկ: ՀՀ-ում գյուղատնտեսության բնագավառին բնորոշ ռիսկերից է նաև գյուղատնտեսական արտադրանքի իրացման ռիսկը, որը առավելապես պայմանավորված է ՀՀ-ից արտաքին շուկաներ դուրս գալու սահմանափակ հնարավորությամբ, ինչպես նաև ՀՀ ներմուծվող գյուղմթերքների ծավալների և գնի հետ:

ՀՀ կառավարության համապատասխան ծրագրով սուբսիդավորվում են գյուղմթերքի մթերման նպատակով մթերող ընկերություններին տրամադրվող վարկերի տոկոսները:

Գյուղմթերք արտադրող անհատները և ֆերմերային տնտեսությունները նախորոք պայմանագրեր են կնքում տեղական մթերող ընկերությունների հետ՝ ապահովագրելով իրենց արտադրանքի իրացումը: Մեր կողմից ֆինանսավորվող տնտեսությունները գյուղմթերքի հիմնական մասը իրացնում են տեղական շուկայում, իսկ 30-40 տոկոսի չափով ունեն արտահանում արտաքին շուկաներ, որից մինչև 10 տոկոսը ուղիղ: Արտաքին շուկաների մեջ էական նշանակություն ուներ ռուսական շուկան, որը վերջին տարիներին ունի դինամիկ նվազման միտում: Ներկայիս պատժամիջոցների և սահմանափակումների ֆոնին ռուսական շուկայի արտահանման ավելի քան 80 տոկոսը փոխարինվել է վրացական, ղազախական (ծաղիկներ, բանջարեղեն), արաբական (ձկնամթերք) և ամերիկյան (վերամշակված գյուղմթերք) շուկաներով: ԵՄ արտահանման մասով կան լայն հնարավորություններ, սակայն անհրաժեշտ են մի շարք նախապայմաններ (սերտիֆիկացում, ստանդարտացում), որոնց մասով Ֆարմ Կրեդիտը աշխատում է եվրոպական գործընկերների հետ տեխնիկական աջակցություն ցուցաբերելով ֆերմերներին:

Այստեղ պետք է նշել կազմակերպության կարևոր դերը որպես վարկավորող կոոպերատիվ կառույց, իր անդամ ֆերմերների հետ տարվող աշխատանքում կարևորում է երկարաժամկետ իրացման պայմանագրերի կնքումը, հուսալի մատակարարների և մթերողների հետ համագործակցությունը, լոգիստիկայի արդյունավետ կազմակերպումը:

Գործառնական ռիսկ: Գործառնական ռիսկն այն հնարավոր կորուստների ռիսկն է, որը կառաջանա համակարգերի թերություններից, մարդկային սխալից, կեղծիքից կամ արտաքին

միջավայրի իրադարձություններից: Երբ վերահսկողությանը չի հաջողվում կատարել իր գործառույթները, գործառնական ռիսկերը կարող են վնասել Կազմակերպության հեղինակությանը, ունենալ իրավական կամ կանոնակարգող հետևանքներ, կամ հանգեցնել ֆինանսական կորուստների:

Կազմակերպությունը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ջանքեր է ձեռնարկում կառավարելու դրանք, ինչպես վերահսկողական հայեցակարգի, այնպես էլ հնարավոր ռիսկերի մոնիթորինգի և դրանց հակազդման միջոցով:

Վերահսկողությունը ներառում է պարտականությունների արդյունավետ տարանջատում, մուտքի հասանելիության, լիազորման և համադրման ընթացակարգեր, աշխատակազմի կրթության և գնահատման գործընթացներ:

Կազմակերպությունում գործառնական ռիսկը կառավարվում է Կազմակերպության Վերստուգողի կողմից: Գործառնական ռիսկերի կառավարման համար մշակված են և պարբերաբար վերանայվում են բազում հսկողական մեխանիզմներ, ինչպիսիք են՝ գործընթացների մշակման, գրանցման և հաստատման գործառույթների բաժանումը տարբեր աշխատակիցների միջև, ամենամսյա այցելությունները մասնաճյուղեր:

Ընկերությունում գործում է Խորհրդին կից ռիսկերի կառավարման հանձնաժողով, որին Ընկերության խորհուրդը պատվիրակել է ռիսկերի հետ կապված հարցերի, այդ թվում Ընկերությանը ներհատուկ ռիսկերի, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համակարգերի (բացառությամբ՝ ներքին ֆինանսական հսկողության համակարգերի) նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառույթը, և Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողով, որի նպատակն է Ընկերության ակտիվների ու պարտավորությունների վերահսկումը և կառավարումը, Ընկերության միջոցների տեղաբաշխումը ու համապատասխան վճարունակության պահպանումը, իրացվելիության և շուկայական ռիսկի կառավարումը:

Ռիսկերի կառավարման վերահսկման գործառույթներում ընդգրկված է նաև Ընկերության վերստուգողը, ով գործում է իր կողմից ներկայացված և Խորհրդի կողմից հաստատված ծրագրով, պարբերաբար ներկայացնում է ընկերության գործունեության մասին հաշվետվություններ և հաղորդումներ, Խորհրդի հանձնարարությամբ իրականացնում է առանձին թեմատիկ նպատակային ուսումնասիրություններ:

3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին

3.3.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ առևտրային կոոպերատիվ,

ռուսերեն՝ «Фарм Кредит Армения» универсальная кредитная организация коммерческий кооператив

անգլերեն՝ «Farm Credit Armenia» universal credit organisation commercial cooperative

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Ֆարմ Կրեդիտ» ՈՒՎԿ ԱԿ,

ռուսերեն՝ «Фарм Кредит» УКО КК,

անգլերեն՝ «Farm Credit» UCO CC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 9/16, գրանցման համարը՝ 43:

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 9/16:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 10) 55 08 31, (+374 10) 55-07-41

էլ. փոստ՝ fca@fca.am,

ինտերնետային կայք՝ www.fca.am:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/ Ֆինանսական տնօրեն Անի Սարգսյանի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+37410) 550831, էլ.փոստ՝ anis@fca.am:

Թողարկողի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Կազմակերպությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվ 2007թ.-ին: Կազմակերպությունը գրանցվել է 2007թ. Սեպտեմբերի 18-ին ՀՀ ԿԲ կողմից N 20 արտոնագրային համարով:

Թողարկողի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

30.06.2026թ. դրությամբ Կազմակերպությունն ունի 11 մասնաճյուղ, որոնց ցանկը և գործունեության հասցեները ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում.

	Մասնաճյուղի անվանում	Հասցե
1.	**Գլխամասային գրասենյակ**	ՀՀ. ք. Երևան, Թբիլիսյան խճղ, 9/16
2.	**Արմավիր մասնաճյուղ**	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Երևանյան փող., շենք 21/5
3.	**Մասիս մասնաճյուղ**	ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, Արարատյան փող. 3/2
4.	**Կոտայք մասնաճյուղ**	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Հանրապետության պողոտա 4/2
5.	**Էջմիածին մասնաճյուղ**	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Սպանդարյան - Մ.Մաշտոց 73/66 տաղավար
6.	**Արտաշատ մասնաճյուղ**	ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փող., շենք 97
7.	**Վայոց Ձոր մասնաճյուղ**	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Նարեկացի փող. 6/12
8.	**Սիսիան մասնաճյուղ**	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Սիսականի փ. 29
9.	**Աշտարակ մասնաճյուղ**	ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու 86
10.	**Մյասնիկյան մասնաճյուղ**	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Մյասնիկյան, Երևանյան փողոց 5/4
11.	**Վեդի մասնաճյուղ**	ՀՀ, Արարատի մարզ 0601, համայնք Վեդի, ք. Վեդի, Արարատյան փողոց 41/3

Կազմակերպությունը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի:

3.3.2. Ներդրումները

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո մինչև Ազդագրի ներկայացման պահը կազմակերպության կողմից էական ներդրումներ չեն կատարվել:

Կազմակերպության կառավարման մարմինները չեն ստանձնել որևէ պարտավորություն ապագայում էական ներդրումներ իրականացնելու վերաբերյալ:

3.4. Բիզնեսի նկարագիրը

3.4.1. Հիմնական գործունեությունը

Կազմակերպությունը տրամադրում է առավելապես գյուղատնտեսական և ձեռնարկատիրական վարկեր, իսկ սպառողական վարկերը կամ փոխառությունները՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով: Ընդ որում, Կազմակերպությունը սպասարկում է գյուղացիական տնտեսություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց, որոնց չափանիշները սահմանվում են Կազմակերպության Խորհրդի որոշմամբ:

Կազմակերպությունը տրամադրում է վարկեր Կազմակերպության անդամ ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին: Կազմակերպության անդամ-փայատեր կարող են դառնալ այն քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք զբաղվում են գյուղատնտեսական մթերքի արտադրությամբ, վերամշակմամբ և հարակից այլ գործունեությամբ, առևտրային, արտադրական կամ ձեռնարկատիրական այլ գործունեությամբ:

Կազմակերպության անդամագրության կարգը հասանելի է Կազմակերպության կայքում www.fca.am:

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության կողմից տրամադրվում են գյուղատնտեսական վարկեր, փոքր և միջին ձեռնարկությունների վարկեր, բնակարանի/բնակելի տան վերանորոգման վարկեր: Կազմակերպությունը մատուցում է նաև լիզինգային ծառայություն, որից կարող են օգտվել իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնց գործունեությունն ընդգրկում է գյուղատնտեսության, ագրոբիզնեսի և այլ ոլորտներ:

Առանձին դեպքերում՝ Կազմակերպության վարկային կոմիտեի որոշմամբ, լիզինգային գործարք կարող է կնքվել Կազմակերպության ոչ անդամների հետ:

Վերը նշված բոլոր պրոդուկտների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է Կազմակերպության ինտերնետային կայքում՝ www.fca.am:


2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության կողմից հաճախորդներին տրամադրված վարկերը կազմել են մոտ 18.1 մլրդ ՀՀ դրամ:

Ստորև ներկայացված է Կազմակերպության կողմից հաճախորդներին տրամադրված վարկերի դինամիկան՝ 2020 թվականից մինչև 2026թ. հունիսի 30-ը:

Կազմակերպության կողմից տրամադրված վարկերի և փոխառությունների ծավալների դինամիկան ներկայացվում է ստորև.

Հաճախորդներին տրված վարկերի դինամիկան 2020-2026թթ.[78]

Հազ. ՀՀ դրամ




Կազմակերպությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ունիվերսալ վարկային կազմակերպությանը բնորոշ ֆինանսական գործառնություններ:

Ֆինանսական գործառնությունները Կազմակերպության կողմից իրականացվում են ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ անկանխիկ եղանակներով:

Կազմակերպության հաշվեկշռի կառուցվածքի դինամիկան ներկայացվում է ստորև.

[7] 2026 թվականի տվյալները վերցված են աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվություններից:
[8] Ներառում է հաճախորդներին տրված վարկերը և ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերը



3.4.2. Հիմնական շուկաները

Կազմակերպությունը վարկեր է տրամադրում և այլ ֆինանսական ծառայություններ է մատուցում առավելապես Հայաստանի Հանրապետության մարզերում՝

ա) գյուղմթերք արտադրողներին, վերամշակողներին,

բ) գյուղացիական տնտեսությունների գործառնական կարիքների բավարարմանն ուղղված և դրանց ուղղակիորեն առնչվող ծառայություններ մատուցողներին (կոոպերատիվներ, ընկերություններ, անհատ ձեռնարկատերեր),

գ) Հայաստանի Հանրապետության մարզերում մշտապես բնակվող և գյուղացիական տնտեսություն վարող անձանց,

դ) ագրոպարենային ոլորտում գործող ցանկացած այլ տնտեսվարող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:

Կազմակերպության վարկային պորտֆելի կառուցվածքը ըստ վարկատեսակների հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ

	30.06.2026	31.12.2025	31.12.2024
Գյուղատնտեսական վարկեր			
Բուսաբուծություն	5,559,872	5,485,903	4,059,132
Անասնապահություն	4,772,207	4,765,465	4,589,908
Ձկնաբուծություն	114,697	99,932	68,005
	10,446,776	10,351,300	8,717,045
Այլ վարկեր			
Առևտուր	1,573,314	1,449,564	1,422,073
Արդյունաբերություն	142,386	197,657	109,926
Սպառողական	3,491,647	3,518,340	3,551,171
Ֆինանսական հատված	0	397	117,206
Այլ	475,545	408,180	328,508
	5,682,892	5,574,138	5,528,884
Ընդամենը վարկային պորտֆել	16,129,668	15,925,438	14,245,929
Լիզինգ	1,816,987	1,872,877	1,655,584
Ընդամենը պորտֆել	17,946,655	17,798,315	15,901,513

Վարկային կազմակերպությունների ընդհանուր վարկային ներդրումներում Թողարկողի վարկային պորտֆելի մասնաբաժինը 2023-2026թթ[9].-ին հետևյալն է.

Թողարկողի վարկային պորտֆելի մասնաբաժինը

Հազ. ՀՀ դրամ

	30.06.2026	31.12.2025	31.12.2024
Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկեր[10]	447,968,993	418,951,221	352,307,606
Կազմակերպության կողմից հաճախորդներին տրամադրված վարկեր	17,946,655	17,798,315	15,901,513
Թողարկողի մասնաբաժինը (%)	4.01%	4.25 %	4.51 %

[9] 2026 թվականի տվյալները վերցված են աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվություններից :

[10] ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հրապարակվող ամսական տվյալներ, http://www.cba.am

Թողարկողի դիրքը վարկային կազմակերպությունների շուկայում 30.06.2026 թվականի դրությամբ հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ[11]


Ցուցանիշ	Ֆարմ Կրեդիտ Արմենիա ՈՒՎԿ ԱԿ	Դիրքը վարկային կազմակերպությունների շուկայում
Ընդհանուր ակտիվներ	20,948,124	10
Հաճախորդներին տրված վարկեր	17,946,655	10
Ընդհանուր պարտավորություններ	17,882,225	7
Ընդհանուր կապիտալ	3,065,899	16
Կանոնադրական կապիտալ	1,525,623	17
Զուտ շահույթ	137,808	21

[11] Հաշվարկների հիմքում ընկած են ՀՀ վարկային կազմակերպությունների՝ 30.06.2026 թվականի դրությամբ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների (աուդիտ չանցած) տվյալները:

3.5. Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը

Թողարկողի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը հետևյալն է.

Կազմակերպությունը որևէ խմբի անդամ չէ:
Ստորև ներկայացվում է Կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը:



3.6. Հիմնական միջոցները

Կազմակերպությունն իր բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք է բերել հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որոնց արժեքի հանրագումարը չի գերազանցում Կազմակերպության ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 10%-ը: 30.06.2026[12] թվականի դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 950.4 մլն ՀՀ դրամ ՀՀ դրամ:

Կազմակերպության ոչ նյութական ակտիվների կազմը և կառուցվածքը 30.06.2026**թ դրությամբ**.

հազ. ՀՀ դրամ

	Համակարգչային ծրագրեր
Սկզբնական արժեք	44,790
Կուտակված մաշվածություն	36,799
Զուտ Հաշվեկշռային արժեք	7,991

Կազմակերպության կողմից իր հիմնական միջոցների օգտագործումը սահմանափակող հանգամանքներ առկա չեն:

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցներն ունեցել են հետևյալ կազմը և կառուցվածքը.

Կազմակերպության հիմնական միջոցների կազմը և կառուցվածքը 30.06.2026**թ. դրությամբ**

հազ. ՀՀ դրամ

	Շենքեր, շինություններ	Համակարգչային սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք	1,007,810	325,478	68,935	202,190	59,981	1,664,394
Կուտակված մաշվածություն	264,718	249,328	51,011	118,067	38,898	722,022
Զուտ Հաշվեկշռային արժեք	743,092	76,150	17,924	84,123	21,083	942,372

[12] 2025 թվականի տվյալները վերցված են ընկերության միջանկյալ եռամսյակային հաշվետվություններից, և աուդիտի կողմից ստուգված չեն

Կազմակերպությունը մոտ ապագայում էական մեծություն կազմող հիմնական միջոցների ձեռքբերում չի պլանավորում:

Կազմակերպության կողմից իր հիմնական միջոցների օգտագործումը սահմանափակող հանգամանքներ չկան:

3.7. Զարգացման վերջին միտումները


2026թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության ակտիվները նախորդ տարվա վերջի համեմատ աճել են 2.69%ով կամ 548.4մլն ՀՀ դրամով՝ կազմելով 20.95 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2025թ. վերջի դրությամբ Կազմակերպության ակտիվները նախորդ տարվա նկատմամբ աճել էին 1,755 մլն ՀՀ դրամով կամ 9.41%ով՝ կազմելով՝ 20.4 մլրդ ՀՀ դրամ:

Դիտարկվող ժամանակաշրջանի վերջում Կազմակերպության պարտավորությունների ծավալը կազմել է 17.9 մլրդ ՀՀ դրամ՝ 2025թ. վերջի համեմատ աճելով 2.35%-ով կամ 410.6 մլն ՀՀ դրամով: 2025թ. վերջի դրությամբ պարտավորությունների ծավալը կազմել է 17.5 մլրդ ՀՀ դրամ՝ 2024թ. դեկտեմբերի 31–ի համեմատ աճելով 1.5 մլրդ ՀՀ դրամով կամ 9.51 %-ով:


Կազմակերպության ընդհանուր կապիտալը 2026թ. հունիսի 30-ի դրությամբ նախորդ տարվա վերջի համեմատ աճել է 137.8 մլն ՀՀ դրամով կամ 4.71 %-ով և կազմել 3.06 մլրդ ՀՀ դրամ: Կազմակերպության ընդհանուր կապիտալը 2025թ. դեկտեմբերի 31–ի դրությամբ 2024թ. դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 238.2մլն դրամով կամ 8.86%-ով՝ կազմելով 2.9մլրդ ՀՀ դրամ:

2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունն ունեցել է 137.8 մլն զուտ շահույթ: Կապիտալի և ակտիվների շահութաբերության ցուցանիշները 2026 թվականի հունիսի 30-ին կազմել են համապատասխանաբար 9.20% և 1.33%, իսկ 2025 թվականին կազմել են համապատասխանաբար՝ 6.00% և 0.86%:

Կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի դինամիկան 2020–2026թթ. ընթացքում ներկայացված է ստորև.



Ստորև ներկայացված են Կազմակերպության տոկոսային եկամուտների, տոկոսային ծախսերի և զուտ տոկոսային եկամուտների դինամիկաները 2020–2026թթ. ժամանակահատվածում:



Կազմակերպության գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ իմանալու համար ներդրողը կարող է ծանոթանալ Կազմակերպության տարեկան և միջանկյալ հաշվետվություններին, որոնք տեղադրված են Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքի www.fca.am «Հաշվետվություններ» բաժնում:

3.8. Շահույթի կանխատեսումը

Մոտակա տարիների գործունեության և շահույթի կանխատեսումներում Կազմակերպությունը հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- ✓ Կազմակերպության գործունեությունը միտված է կոոպերատիվի անդամ-փայատերերին առավել հարմարավետ և համալիր ծառայությունների մատուցմանը՝ բալանսավորելով անդամ-փայատիրոջ շահը և Կազմակերպության շահութաբերությունը,
- ✓ Որպես սոցիալապես պատասխանատու վարկավորող՝ Կազմակերպության ռեսուրսները տեղաբաշխելիս առաջնորդվել հաշվի առնելով ռիսկերի և եկամտաբերության ընդունելի մակարդակները՝ պահպանելով վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները,
- ✓ ապահովել Կազմակերպության դինամիկ զարգացման համար անհրաժեշտ մասնաճյուղերի ստեղծում, տեխնիկատեխնոլոգիական, տեղեկատվական համակարգերի արդիականացում,
- ✓ ապահովել Կազմակերպության զարգացմանը համահունչ անձնակազմի վարձատրության, ուսուցման և վերապատրաստման ծախսեր,
- ✓ Կազմակերպության գործունեության ապահովման ծախսեր:

Ստորև ներկայացված են առաջիկա տարիների համար Կազմակերպության զուտ շահույթի կանխատեսված ցուցանիշները.

Անվանումը	2026	2027	2028	2029
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	2,912,837	3,612,284	3,995,301	3,882,751
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(1,469,600)	(1,763,843)	(1,966,243)	(1,870,700)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ/ծախս	1,443,237	1,848,441,	2,029,058	2,012,051
Այլ եկամուտներ	7,000	7,000	7,000	8,050
Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման ծախս	(47,000)	(81,800)	(95,001)	(90,518)
Անձնակազմի գծով ծախսեր	(824,200)	(928,000)	(1,028,000)	(1,130,800)

Այլ ծախսեր	(399,400)	(467,000)	(467,000)	(535,000)
Շահույթ մինչև հարկվելը	179,637	378,641	446,057	263,783
Շահութահարկի գծով ծախս	(42,000)	(83,301)	(98,132)	(58,032)
Ժամանակաշրջանի շահույթ (վնաս) հարկումից հետո	137,637	295,340	347,925	205,751
Ընդամենը ժամանակաշրջանի Համապարփակ ֆինանսական արդյունք	137,637	295,340	347,925	205,751

Կազմակերպության կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու Կազմակերպության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ գործոնների վրա.

- Կազմակերպության կողմից ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների ծավալներ և տոկոսներ,
- Կազմակերպության համար ընդունելի ռիսկերի սահմանաչափերի և ռիսկայնության մակարդակի սահմանում,
- Կազմակերպության տեխնիկատեղեկատվական հագեցվածության ապահովման ուղղությամբ կատարվող ծախսեր,
- Կազմակերպության անձնակազմի վարձատրության, վերապատրաստման, ինչպես նաև Կազմակերպության պահպանման հետ կապված ծախսեր:

Կազմակերպության կառավարման մարմինները հնարավորություն չունեն ազդելու Կազմակերպության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ գործոնների վրա.

- Հիմնական շուկայական տոկոսադրույքների վարքագծի փոփոխություններ,
- Տնտեսության զարգացման բացասական միտումներ և դրանից բխող վարկերի առաջարկի և պահանջարկի նվազում,
- Անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Կազմակերպության բնականոն գործունեությունը:

3.9. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները


3.9.1. Կառավարման մարմինների կառուցվածքը, իրավասություններն ու պարտականությունները

Կազմակերպության կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները.

- ✓ **Փայատերերի ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ Ընդհանուր ժողով),**
- ✓ **Դիտորդ խորհուրդ (այսուհետ նաև՝ Խորհուրդ),**
- ✓ **Գլխավոր գործադիր տնօրենը:**

Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը նրա փայատերերի ընդհանուր ժողովն է: Կազմակերպությունում ստեղծվում է Դիտորդ խորհուրդ, որն իրականացնում է օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ դիտորդ խորհրդին վերապահված իրավասություններ: Դիտորդ խորհրդի անդամներն իրավունք չունեն գործել Կազմակերպության անունից: Կազմակերպության գործադիր մարմինն է Գլխավոր գործադիր տնօրենը: Գլխավոր գործադիր տնօրենը ղեկավարում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը և հաշվետու է դիտորդ խորհրդին ու Կազմակերպության փայատերերի ընդհանուր ժողովին: Կազմակերպության կառավարման մարմինների իրավասությունը և նրանց որոշումների ընդունման կարգը սահմանվում են օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ: Ընդհանուր ժողովում որոշումներ ընդունելիս Կազմակերպության անդամն ունի մեկ ձայնի իրավունք: Կազմակերպությունն ունի գլխավոր հաշվապահ, ներքին աուդիտի ստորաբաժանում: Ընդհանուր Ժողովն ընտրում է նաև Անվանակարգային հանձնաժողով, որի իրավասությունները սահմանվում են Կազմակերպության կանոնադրությամբ:

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.



Կազմակերպության կանոնադրությամբ Կազմակերպության կառավարման մարմիններին վերապահված են հետևյալ իրավասությունները.

Փայատերերի ընդհանուր ժողով (Ընդհանուր Ժողով)

Կազմակերպության Ընդհանուր Ժողովը Կազմակերպության բարձրագույն կառավարման մարմինն է, որին մասնակցելու և որոշումներ ընդունելու իրավունք ունեն Կազմակերպության փայատերերը: Փայատերերն Ընդհանուր ժողովին մասնակցում են անձամբ կամ լիազոր ներկայացուցիչների միջոցով: Կազմակերպության ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Կազմակերպության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,

բ) Կազմակերպության վերակազմակերպումը,

գ) Կազմակերպության լուծարումը,

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

ե) անվանակարգային հանձնաժողովի ներկայացմամբ դիտորդ խորհրդի քանակական կազմի հաստատումը, դիտորդ խորհրդի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

զ) Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը,

է) Ընդհանուր ժողովի գումարման կանոնակարգի հաստատումը,

ը) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը (անհրաժեշտության դեպքում),

թ) ֆինանսական տարվա ընթացքում նախատեսվող Կազմակերպության կողմից կանոնադրական կապիտալի ավելացման սահմանաչափի որոշումը և դրա արդյունքում Կազմակերպության փայատերեր (կոոպերատիվի անդամներ) ներգրավվելու վերաբերյալ որոշման ընդունումը: Սույն ենթակետով նախատեսված կանոնադրական կապիտալի ավելացման և դրա արդյունքում փայատերերի ներգրավման ընթացիկ գործընթացն իրականացնում է Խորհուրդը Կազմակերպության կանոնադրությամբ և Ժողովի որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում:

ժ) Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դիտորդ խորհրդի ընդունած որոշման հաստատումը:

Կազմակերպության Ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությանը պատկանող հարցերը չեն կարող փոխանցվել Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենին: Կազմակերպության ընդհանուր Ժողովը չի կարող քննարկել և որոշում ընդունել իր իրավասությանը չվերաբերող հարցերի վերաբերյալ:

Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Կազմակերպության փայատերերը՝ անձամբ կամ ներկայացուցիչների միջոցով,

բ) Կազմակերպության դիտորդ խորհրդի անդամները, Գլխավոր գործադիր տնօրենը, գլխավոր հաշվապահը և ժողովին նախապես հրավիրված այլ անձինք՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

գ) Կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր Ժողովի օրակարգի հարցերում),

դ) այլ անձինք, անհրաժեշտության դեպքում:

Ընդհանուր ժողովները նախագահում է Կազմակերպության դիտորդ խորհրդի նախագահը: Եթե խորհրդի նախագահը բացակայում է, ապա նրան փոխարինում է խորհրդի կողմից նշանակված խորհրդի անդամը: Քվեարկությունների ժամանակ յուրաքանչյուր փայատեր ունի մեկ ձայնի իրավունք անկախ կանոնադրական հիմնադրամում իր փայամասնակցության չափից:

Դիտորդ խորհուրդը (խորհուրդը)

Կազմակերպության Խորհուրդն իրականացնում է Կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ Կազմակերպության կանոնադրությամբ և Ընդհանուր ժողովի կողմից հաստատված կանոնակարգով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: Կազմակերպության Խորհուրդը կազմված է մինչև ութ (8) անդամից՝ ներառյալ ոչ պակաս քան (1) մեկ և ոչ ավելի քան (2) երկու հրավիրված անդամից: Խորհրդի անդամներն ընտրվում են (4) չորս տարի ժամկետով, իսկ հրավիրված անդամները՝ (2) երկու տարի ժամկետով: Կազմակերպության Խորհրդի անդամներն ընտրվում են քվեարկության իրավունք ունեցող փայատերերի կողմից, իսկ հրավիրված անդամները նշանակվում են Խորհրդի կողմից:

Ընդհանուր Ժողովին Կազմակերպության Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Անվանակարգային հանձնաժողովը՝ Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: Կազմակերպության գործունեության տարածքը Խորհրդի կողմից բաժանվում է տարածաշրջանների՝ Խորհրդում համամասնական ներկայացուցչականությունն ապահովելու համար: Խորհրդի անդամությունից խորհրդի անդամի հրաժարվելու կամ վերջինիս լիազորություններն իրականացնելու անհնարինության (Խորհրդի անդամի բացակայություն, առողջական վիճակի վատթարացում, մահ) դեպքում վերջինիս լիազորությունները դադարեցված է համարվում Խորհրդի որոշման հիման վրա: Խորհրդի նոր անդամ ընտրվում է արտահերթ ընդհանուր ժողովի կողմից՝ ժողովին մասնակից ընտրողների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման այլ դեպքերը կարգավորվում են Կազմակերպության Կանոնադրության 7.2 կետի «ե» ենթակետով: Կազմակերպության Խորհրդի անդամներին՝ Խորհրդի նիստերին մասնակցելու համար տրվում է փոխհատուցում: Փոխհատուցման կարգը սահմանում է Խորհուրդը: Կազմակերպությունը կարող է ողջամիտ սահմաններում փոխհատուցումներ նշանակել Խորհրդի անդամներին՝ Խորհրդի նիստերին մասնակցելու կամ հատուկ հանձնարարություններ կատարելու համար: Կազմակերպության Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից՝ Խորհրդի անդամների կազմից՝ երկու տարի ժամկետով:

Կազմակերպության Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները,

բ) գումարում և նախագահում է խորհրդի նիստերը,

գ) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,

դ) նախագահում է Կազմակերպության Ընդհանուր ժողովում,

ե) կազմակերպում է խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը, եթե այդպիսիք կան,

զ) իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված այլ իրավասություններ:

Կազմակերպության խորհրդի իրավասություններն են՝

ա) Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Կազմակերպության հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,

բ) Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,

գ) Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

դ) Կազմակերպությունում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը,

ե) Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,
զ) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը,

է) Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր Ժողովին ներկայացումը,

ը) Ընդհանուր ժողովի հաստատմանը Կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձի թեկնածության ներկայացումը,

թ) Կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը, թա) Կազմակերպությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

թբ) Կազմակերպության կողմից ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,

թգ) Կազմակերպության տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Կազմակերպության ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը,

թդ) Կազմակերպության պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման մասին որոշման ընդունումը,

թե) Կազմակերպության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

թզ) Կազմակերպության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը, թէ) Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը, թը) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը, թթ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը,

ժ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը, ժա) առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը,

ժբ) Կազմակերպության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված այն խոշոր գործարքների կնքումը, որոնց արժեքը՝ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ, կազմում է Կազմակերպության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսը (խոշոր են համարվում մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Կազմակերպության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Կազմակերպության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը

կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Կազմակերպության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը):

ժգ) Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի վարձատրության պայմանների հաստատումը, ժդ) Կազմակերպության գործունեության կանոնակարգի հաստատումը:

Կազմակերպության Խորհուրդն իր աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար կարող է ստեղծել կից հանձնաժողովներ, որոնցում կարող են ընդգրկվել ինչպես Խորհրդի անդամները, այնպես էլ Կազմակերպության այլ ղեկավարները և աշխատակիցները: Այդ հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

Կազմակերպության խորհրդի նիստերը գումարում է Կազմակերպության Խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամի, Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի, Կազմակերպության արտաքին աուդիտն իրականացնող անձի, ինչպես նաև Կազմակերպության փայատերերի հինգ կամ ավելի տոկոսի գրավոր պահանջով: Խորհրդի նիստերի քվորումը չի կարող խորհրդի անդամների կեսից պակաս լինել: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Սակայն Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի ընտրության և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ որոշումներն ընդունվում են Խորհրդի ամբողջ կազմի կողմից միաձայն: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է: Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով Ընդհանուր ժողովն ընտրում է Խորհրդի անդամներ (բացառությամբ Խորհրդի հրավիրված անդամի)՝ պաշտոնավարման ժամկետը լրացած կամ այլ հիմքով ազատված անդամների թափուր պաշտոնը լրացնելու համար: Խորհրդի յուրաքանչյուր անդամ ներկայացնում է կոնկրետ տարածաշրջան՝ ըստ փայատերերի բնակության կամ գործունեության կենտրոնացման վայրի: Տարածաշրջանները սահմանվում են Խորհրդի կողմից:

Անվանակարգային հանձնաժողովի հիմնական գործառույթը վարկային կազմակերպության Խորհրդի անդամների թեկնածություններ առաջադրելն է:

Թեկնածուների ցանկը կազմելիս՝ Անվանակարգային հանձնաժողովը պետք է հնարավորության սահմաններում ապահովի Խորհրդի անդամների այնպիսի թեկնածություններ, որոնք կներկայացնեն Կազմակերպության գործունեության բոլոր տարածաշրջանները

(տարածաշրջանները սահմանվում են Խորհրդի որոշմամբ): Անվանակարգային հանձնաժողովը աշխատանքային հարցերի քննարկման համար քվորում ունի, եթե ներկա են անդամների երկու երրորդը: Հանձնաժողովը պարտավոր է կազմել քննարկումների արձանագրություններ, որոնք հանձնվում են Խորհրդի նախագահին և պահպանվում են Կազմակերպության փաստաթղթաշրջանառության ընթացակարգերին համապատասխան: Անվանակարգային հանձնաժողովի՝ Կազմակերպության կանոնադրությամբ չնախատեսված իրավասությունները և գործունեության կարգը սահմանվում են Ընդհանուր ժողովի հաստատած Անվանակարգային հանձնաժողովի կանոնակարգով: Յուրաքանչյուր տարեկան Ընդհանուր ժողովին ընտրվում է նոր Անվանակարգային հանձնաժողով: Անվանակարգային հանձնաժողովն ընտրվում է Կազմակերպության գործունեության տարածաշրջանները, ոլորտները և ներգրավված փայատերերի բազմազանությունը լավագույն կերպով ներկայացնելու սկզբունքով: Պահպանելով այդ սկզբունքը Կազմակերպության գործունեության յուրաքանչյուր տարածաշրջանից ընտրվում է մեկ անդամ՝ մեկ տարի ժամկետով:

Անվանակարգային հանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկվել Կազմակերպության Խորհրդի անդամները, վարձու ղեկավարները և այլ աշխատակիցները: Եթե տարեկան Ընդհանուր ժողովին Անվանակարգային հանձնաժողովի նոր կազմ չի ընտրվում, ապա Անվանակարգային հանձնաժողովի նախկին կազմը համարվում է վերընտրված: Անվանակարգային հանձնաժողովը ծառայում է մինչև նոր Անվանակարգային հանձնաժողովի ընտրությունը և լիազորությունների ստանձնումը: Անվանակարգային հանձնաժողովի անդամները չեն կարող առաջադրել իրենց թեկնածությունները որպես խորհրդի անդամ:

Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը

Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը, որն ի պաշտոնե հանդիսանում է կոոպերատիվի նախագահ: Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենն ընտրվում է Խորհրդի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ: Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Կազմակերպության անունից կնքում է գործարքներ, գործում է Կազմակերպության անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը `

ա) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը,

բ) նախօրոք քննարկում է Ընդհանուր Ժողովի կամ Խորհրդի կողմից քննարկման ենթակա բոլոր հարցերը, որի համար պատրաստում է անհրաժեշտ փաստաթղթերը, կազմակերպում Ընդհանուր Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,
գ) տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
դ) հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը, աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին, լուծում է աշխատակիցների ընտրության, տեղաբաշխման, ուսուցման և վերապատրաստման հարցերը,
ե) Կազմակերպության աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
զ) կատարում է Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի ենթակաների միջև պարտականությունների բաշխումը,
է) իրականացնում է Կազմակերպության կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:
Գլխավոր գործադիր տնօրենի որոշումները, որպես կանոն, իրագործվում են նրա հրամանների և կարգադրությունների հիման վրա: Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում Կազմակերպության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվությունների, ֆինանսական, վիճակագրական և այլ հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում Կենտրոնական բանկ և պետական այլ մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Կազմակերպության փայատերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Կազմակերպության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին Կազմակերպության կանոնադրությանը և ներքին իրավական ակտերին համապատասխան:

Գլխավոր գործադիր տնօրենը Խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան կիսամյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ: Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Կազմակերպության կառավարման այլ մարմինների, Կազմակերպության գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ, եթե Կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան

փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին: Գլխավոր գործադիր տնօրենը պաշտոնավարում է անժամկետ: Գլխավոր գործադիր տնօրենի աշխատանքները գնահատվում են խորհրդի կողմից ամեն տարի: Խորհրդի կողմից Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝ ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Կազմակերպության գործադիր տնօրեն (Վարկային կազմակերպության ղեկավար), գ) օրենքով սահմանված կարգով որակավորումից զրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից: Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների դադարեցման խորհրդի որոշումը պետք է հաստատվի ընդհանուր ժողովի կողմից:

Կազմակերպության գլխավոր հաշվապահը և գլխավոր ֆինանսական մասնագետը

Կազմակերպության գլխավոր հաշվապահին իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները: Կազմակերպության գլխավոր հաշվապահը նշանակվում է Գլխավոր գործադիր տնօրենի կողմից: Կազմակերպության գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել ընդհանուր Ժողովին, խորհրդին, գործադիր մարմնի անդամներին: Կազմակերպության գլխավոր հաշվապահն առնվազն կիսամյակը մեկ անգամ Կազմակերպության Խորհրդին է ներկայացնում հաշվետվություն կազմակերպության ֆինանսական վիճակի և ցուցանիշների մասին:

Կազմակերպության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Կազմակերպության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Կազմակերպության փայատերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Կազմակերպության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան: Կազմակերպության Գլխավոր ֆինանսական մասնագետն իրականացնում է Կազմակերպության ակտիվների կառավարման գործունեության ընդհանուր ղեկավարումը: Գլխավոր ֆինանսական մասնագետը պատասխանատվություն է կրում Կազմակերպության կողմից Կենտրոնական բանկի

սահմանած հիմնական տնտեսական նորմատիվների պահպանման համար: Կազմակերպության Գլխավոր ֆինանսական մասնագետին նշանակում և ազատում է Գլխավոր գործադիր տնօրենը:

3.10. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը

Դիտորդ Խորհուրդ՝

1. **Խորհրդի նախագահ՝ Սերյոժա Հայրապետյան**

Բնակության վայր	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Խնձորեսկ
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Ֆերմեր (հացահատիկային կուլտուրաների մշակություն)

2. **Խորհրդի անդամ՝ Արտավազդ Խաչատրյան**

Բնակության վայր	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Ֆերմեր (ջերմոցային տնտեսություն)

3. **Խորհրդի անդամ՝ Ռաֆիկ Օհանյան**

Բնակության վայր	ՀՀ, Տավուշի մարզ, գ. Պտղավան
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Ֆերմեր (այգեգործություն, ջերմոցային տնտեսություն)

4. Խորհրդի անդամ՝ Ռոլանդ Սուսունյան

Բնակության վայր	ՀՀ, Արարատի մարզ, գ. Նարեկ
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Ֆերմեր (այգեգործություն)

5. Խորհրդի անդամ՝ Արմեն Ստեփանյան

Բնակության վայր	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Ֆերմեր (բանջարաբոստանային կուլտուրաների մշակություն)

6. Խորհրդի անդամ՝ Էդվարդ Պետրոսյան

Բնակության վայր	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Ֆերմեր (այգեգործություն)

7. Խորհրդի անկախ անդամ՝ Հարություն Զաքոյան

Բնակության վայր	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	

Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Երևանի «կապի միջոցների» գիտա-հետազոտական ինստիտուտ - պատասխանատու նախագծերի կառավարման գծով, Երևանի պետական համալսարան – դասախոս (դոցենտ)

8. **Խորհրդի անկախ անդամ՝ Քնարիկ Պետրոսյան**

Բնակության վայր	ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ. Արենի
Իրավասությունները	համաձայն կազմակերպության կանոնադրության
Պարտականությունները	
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

Գործադիր մարմին՝

1. **Գլխավոր գործադիր տնօրեն՝ Արմեն Գաբրիելյան**

Բնակության վայրը	ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ. Վերնաշեն
Իրավասությունները	• իրականացնում է ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը, • տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, • ներկայացնում է ընկերությունը տարբեր՝ այդ թվում միջազգային, պետական և մասնավոր կառույցներում, • գործարքներ է կնքում ընկերության անունից, • տնօրինում է Վարկային կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, • հաստատում է Վարկային կազմակերպության հաստիքացուցակը, աշխատանքի է ընդունում և
Պարտականությունները	

	• աշխատանքից ազատում վարկային կազմակերպության աշխատակիցներին, լուծում է աշխատակիցների ընտրության, տեղաբաշխման, ուսուցման և վերապատրաստման հարցերը
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

2. Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/Գործառնական տնօրեն՝ Մուշեղ Պետրոսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան
Իրավասությունները Պարտականությունները	• ընկերության գործունեության և դրա հետ կապված գործողությունների՝ անձնակազմի, վարկատեսակների և ընթացակարգերի կարգավորման ամբողջական ցիկլի կազմակերպումն ու ամենօրյա ղեկավարումը: • գործառնական թիմի ձևավորում և ղեկավարում, մասնավորապես անձնակազմի աշխատանքի ընդունում, վարկային ոլորտի աշխատակիցների ղեկավարում, անձնակազմի ուսուցում, աշխատանքային թրեյնինգների իրականացում և այլ ուսուցանող մեթոդների կիրառում, վարկային ոլորտի անձնակազմի մոտիվացում: • վարկատեսակների զարգացում և/կամ փոփոխություն, ինչպես նաև առկա վարկատեսակների արդյունավետ կիրառում: • ղեկավարում է գործառնական ծրագրերի և բյուջեի պատրաստումը, իրականացնել գործառնական • ղեկավարում է ֆինանսական և ինստիտուցիոնալ զարգացման ծրագրերի կառավարումը, ձևավորում և կիրառության մեջ է դնում համապատասխան աշխատանքների հաշվետվություններ:

Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

3. Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/Ֆինանսական տնօրեն՝ Անի Սարգսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները Պարտականությունները	• Պատասխանատու է Կազմակերպության ֆինասական գործողությունների կազմակերպման համար, և ղեկավարում է ֆինանսական ամբողջ անձնակազմը: • Վերահսկում է հաշվետվությունների պատրաստումն ու ներկայացումը տարբեր շահառուներին (ՀՀ կենտրոնական բանկ, հարկային մարմիններ, միջազգային վարկառու կազմակերպություններ, ներքին ստորաբաժանումներ): • Ապահովում է արդյունավետ լիկվիդայնության կառավարումը՝ բանակցելով և ներգրավելով ֆինանսական միջոցներ ներքին և արտաքին ներդրողներց: • Ղեկավարում է Ընկերության պլանավորման և բյուտջետավորման գործընթացները: • Իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

4. Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/վարկային տնօրեն՝ Հրանտ Եղիազարյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները Պարտականությունները	• Կառավարել և վերահսկել Վարկային վերլուծությունների ծառայության գործունեությունը, • Ելնելով Ընկերության ընդհանուր ռազմավարական նպատակներից մշակել վարկային քաղաքականության ռազմավարությունը, • Հաստատել և զարգացնել հարաբերություններ համապատասխան գործընկերների հետ, • Իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

5. Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/Տարածքային զարգացման գծով տնօրեն՝ Արսեն Լոբյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները Պարտականությունները	•Կոորդինացնել Ընկերության մասնաճյուղերի աշխատանքը և զարգացնել վերջիններս որպես վաճառքի կենտրոններ, •Նախաձեռնել Ընկերության սպասարկման բարելավմանն, արդիականացմանն և թվայնացմանն ուղղված նախագծեր, •Իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում

	առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

6. Գլխավոր հաշվապահ՝ Հրաչուհի Հովհաննիսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները Պարտականությունները	•կազմակերպում հաշվապահական հաշվառման վարում, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, •ներկայացնում ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններին •Իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

7. Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Մեսրոբ Ավագյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասությունները Պարտականությունները	•հսկողություն է իրականացնում Վարկային կազմակերպության ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ, •հսկողություն է իրականացնում Վարկային կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրենի, տարածքային և

	կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Վարկային կազմակերպության ներքին ակտերի, Գլխավոր գործադիր տնօրենին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ, •եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Վարկային կազմակերպության խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ: •Իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

Ազդագրի ԿԲ գրանցման ներկայացման պահին Կազմակերպության ակտիվների 10 և ավելի տոկոսը կենտրոնացված չէ որևէ մասնաճյուղում:

Կազմակերպության և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև Ազդագրի ԿԲ գրանցման ներկայացման պահին դրությամբ շահերի բախում չկա:

Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունը

Կազմակերպության Դիտորդ խորհրդում գործում է աուդիտի հանձնաժողով, որի անդամները ընտրվում են խորհրդի անդամներից: Ազդագրի կազմման պահին հանձնաժողովի անդամներն են Ռոլանդ Սուսունյանը, Էդվարդ Պետրոսյանը և Հարություն Զաքոյանը:

Հանձնաժողովի հիմնական նպատակն է օժանդակել խորհրդին իրականացնելու՝ հաշվետվողականության քաղաքականությանը, ներքին վերահսկողությանը, ֆինանսական հաշվետվություններին, օրենսդրական և կանոնադրական պահանջներին առընչվող իր հսկողական պարտականությունները:

Կազմակերպությունում ներդրված կորպորատիվ կառավարման սկզբունքները համապատասխանում են Հայաստանի Հանրապետությունում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին:

3.11. Հսկող անձինք

Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենքի իմաստով Ընկերությունը գտնվում է ստորև նշված անձի ուղղակի հսկողության տակ՝

- «Գյուղ Կոոպ աջակցության հիմնադրամ Ընկերություն», որը հանդիսանում է Ընկերության 36.79% փայատեր

Կազմակերպությունը չի գտնվում որևէ անձի անուղղակի հսկողության տակ:

3.12. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

3.12.1. Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Կազմակերպության 2024 և 2025 թվականների տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ անկախ աուդիտորական եզրակացություններով և 2026 թվականի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները (աուդիտի չենթարկված) ներառված են Ազդագրին կից հավելվածներում:

Ցանկության դեպքում ներդրողները Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները կարող են ստանալ նաև Կազմակերպության գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից, ինչպես նաև ծանոթանալ Թողարկողի պաշտոնական ինտերնետային տնային էջում՝ www.fca.am:

Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2026թ. հունիսի 30-ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագրի գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

3.12.2. Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Կազմակերպությունը ներգրավված չէ ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա էական ազդեցություն ունեցող դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթներում:

3.13. Լրացուցիչ տեղեկատվություն

3.13.1. Կազմակերպության կանոնադրական կապիտալը

1) **Կանոնադրական կապիտալը**

- Կանոնադրական կապիտալի մեծությունը կազմում է 1,554,730,332.5 ՀՀ դրամ:
- Կազմակերպության անդամ - փայատերերի քանակը կազմում է 11,827:
- Մեկ փայի անվանական արժեք չի սահմանվում ըստ Կազմակերպության կանոնադրության:

2) **Կանոնադրությունը**

Թողարկողի նպատակը և գործունեության ոլորտի մասին մանրամասն տեղեկատվությունը նկարագրված է Թողարկողի կանոնադրության էջ 4-ում և 8–ում:

- Թողարկողի նպատակը

Թողարկողի նպատակն է տրամադրել բացառապես ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառություններ, իսկ սպառողական վարկերը կամ փոխառությունները՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով: Ընդ որում Վարկային կազմակերպությունը սպասարկում է առավելապես գյուղացիական տնտեսություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց, որոնց չափանիշները սահմանվում են Վարկային կազմակերպության Խորհրդի որոշմամբ:

- Թողարկողի գործունեության ոլորտը

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» առևտրային կոոպերատիվ ունիվերսալ Վարկային Կազմակերպությունը, կորպորատիվ վարկային հաստատություն է, որն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող այլ օրենսդրական ակտերով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, այլ գերատեսչական ակտերով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, այլ իրավական ակտերով և սույն

Կանոնադրությամբ:

Վարկային կազմակերպությունը Օրենքով սահմանված լիցենզիայի հիման վրա կարող է իրականացնել հետեյալ գործունեությունը՝

ա) ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ,

բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ, գ) տրամադրել երաշխիքներ,

դ) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,

ե) կանխիկ և/կամ անկանխիկ ձևով գնել և վաճառել արտարժույթ՝ ինչպես իր կողմից տրամադրված վարկերի մարումը սպասարկելու համար, այնպես էլ վարկերի մարումների սպասարկման հետ չկապված այլ դեպքերում, կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ:

զ) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

է) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,

ը) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն, թ) Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

3.14. Էական պայմանագրերը

Կազմակերպությունում առկա չեն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում Կազմակերպության կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Կազմակերպության վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

3.15. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Ներկայացվող Ազդագրում պարտատոմսերի թողարկման կազմակերպման վերաբերյալ որպես խորհրդատու հանդես է գալիս՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն: Այլ անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն ներկայացվող Ազդագրում չի օգտագործվել:

3.16. Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Կազմակերպության կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.fca.am հասցեով, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Կազմակերպության գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, 0052, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 9/16: